

Հ. ԿԱՐԴԱՆՅԱՆ

Գրույ՛լ

ԲԵՄԱԿԱՆ
ԱՐԿԵՍՏԻ

Քաղաք

Արարիկի քաղաքում
հունիսի 15-ին 1920 թվականին
մեզ հասցրեցին
ձեր թուղթը և մարտիկ
պատի

0 2 NOV 2010

C արմ-ս
3044

ՎԱՎԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ

792

Վ-30

Զ Ր Ո Ւ Յ Ց
Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ա Ր Վ Ե Ս Տ Ի
Մ Ա Ս Ի Ն

ՀԱՄԱՌՈՑ ՁԵՌՆԱՐԿ ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ՌԵԺԻՍՅՈՐՆԵՐԻ
ՅԵՎ ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԵՐԱՍԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ՀՐԱՏՈՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺԿԽ-ԻՆ ԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ՎԱՐՁՈՒԹՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԱՆ

ՅԵՐԵՎԱՆ—1939

8 AUG 2013

6974



56230-66

Խմբագիր՝ Ս. ՄԵԼԻՔՍԵՐՅԱՆ
 Սրբագրիչ՝ Մ. ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆ
 Գլավիտի լիազոր ն. 2821 պատ. № 640, Կիրառ 3000

Պետնամալսարանի հրատարակչության տպարան, Տեղյան № 72.

Ամեն մի արվեստագետ՝ գրող, նկարիչ, դերասան, քանդակագործ և այլն, իր ստեղծագործութեամբ վերարտադրելով ռեալիտետի վերին կողմը, միշտ ձգտում է գրսևորել իր վերաբերմունքը տվյալ փաստի կամ յերեվույթի նկատմամբ, այսինքն արտահայտել այն մտքերն ու զգացմունքները, վոր արթնացել են նրա մեջ վերոհիշյալների առնչութեամբ, ստեղծագործութեան պրոցեսում: Նա ձգտում է նույն այդ մտքերով և զգացումներով վարակել ուրիշ մարդկանց: Նա ցանկանում է, վոր ուրիշներն էլ ունենան նույն այդ մտքերն ու զգացումները, ինչ ունեցել է ինքը:

Այլպիսով, արվեստագետը ներգործում է մարդկանց վարքի վրա, ներգործելով մարդկանց վարքի վրա, միաժամանակ ներգործում է նաև կյանքի վրա, նպաստում է կյանքի փոփոխմանը և վերակառուցմանը:

Յեթե արվեստագետը վկա յի լինում խորհրդային իրավակարգին փաստ հասցնող մի վորևե ալյանդակ դիպվածի, վորը իրեն՝ արվեստագետին չափազանց հուզում է, ապա նա աշխատում է այդ դիպվածն այնպես նկարագրել իր ստեղծագործութեան մեջ, վոր նույնպիսի հուզում, ցատում (ինչպիսին ինքն է ունեցել), առաջացնի նաև ուրիշ մարդկանց մեջ: Մեր յերկրի աշխատավորութեանը բոլորովին նոր բովանդակութեամբ և

նոր ձևով ե վերակառուցում իր յերկիրը, ուրեմն խորհրդային արվեստագետը ևս պետք է նպաստի այդ վերակառուցմանը իր արվեստին հատուկ ուրույն միջոցներով:

Բնական արվեստը սինթետիկ արվեստ է: Այստեղ մենք ունենք մի շարք մարդկանց տարբեր ստեղծագործություններ. զբամատուրգի՝ վոր պիես ե գրել, գերասանների՝ վոր խաղում են այդ պիեսը, նկարչի՝ վոր ձևավորել ե պիեսի բեմադրությունը, յերաժշտի՝ վոր գրել ե տվյալ պիեսի ներկայացման յերաժշտությունը և ռեժիսյորի՝ վոր կազմակերպել ե ներկայացումը:

Ուրեմն ներկայացման հեղինակը հանդիսանում ե այն կոլլեկտիվը, վորը ստեղծել ե տվյալ ներկայացումը:

Պարզ ե, վոր կոլլեկտիվի անդամների աշխատանքները տարբեր են. մեկինը ավելի, մյուսինը՝ պակաս: Թատերական գործում ճիմնակում և առաջատար տեղը պատկանում ե առաջին հերթին դերասանին: Գերասանի միջոցով ե, վոր տվյալ կոլլեկտիվը արտահայտում և հաղորդում ե հանդիսականին այն մտքերն ու գաղափարները, վոր ընկած են վողջ ներկայացման հիմքում: Այդ գործում խոշոր և պատասխանատու տեղ ե գրավում բեմադրող-ռեժիսյորը: Ռեժիսյորն այն անձնավորությունն ե, վորն ի մի բերելով և համադրելով բոլորի աշխատանքը, կազմակերպում ե ներկայացումը: Ռեժիսյորն այն անձնավորությունն ե, վորը կոլլեկտիվի անդամների մեջ ստեղծում ե ներքին շարժակ և ստեղծագործող կոլլեկտիվի հետ միասին վորոշում և ներ-

կայացման նպատակը, այն հիմնական գաղափարը, թե ինչ ե ուզում ասել ստեղծագործող կոլլեկտիվը տվյալ պիեսի բեմադրությունը, ինչ նպատակ ե դնում նա իր առաջ: Ահա այս հիմնական խնդիրներն են, վոր առաջին հերթին պետք ե լուծի ստեղծագործող կոլլեկտիվը:

Պարզ ե, վոր այդ խնդիրները պետք ե դառնան ամբողջ կոլլեկտիվի սեփականությունը և ռեժիսյորը միայն պետք ե նշի այն ուղիները, վորոնցով պիտի ընթանա վողջ կոլլեկտիվը առաջադրված խնդիրները ճիշտ լուծելու համար:

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր թատրոնը քարոզ որգանիզմ ե և թատերական ստեղծագործությունը պետք ե մտենալ շատ մեծ զգուշություն: Չե՞ վոր սխալ հասկացված և սխալ մեկնաբանված պիեսը կհանդի հակառակ և անցանկալի հետևանքի:

Ուրեմն՝ ամեն մի թատերական որգանիզմ ձեռնաձուխ լինելով ներկայացմանը, պետք ե միանգամայն պարզ իմանա, թե ինչի՞ համար ե նա բեմադրում տրվյալ պիեսը և ինչ նպատակ ե դնում իր առաջ այդ պիեսը բեմադրելով:

Այդ խնդիրն առավելագույն չափով վերաբերում ե ռեժիսյորին և ռեժիսյորն ե, վոր շունչ պիտի տա ներկայացմանը:

Թատերական ստեղծագործությունը մասսայական ե, ամեն որ մի քանի հարյուր մարդ դիտում են ներկայացումը, նա կարող ե և պետք ե տա մեր աշխատավորությունը հուզիչ և խոր արվեստ, մի արվեստ, վորը նպաստի լավագույն և յերջանիկ կյանքի կերտմանը:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Պիեաի հենց առաջին ընթերցումից սկսվում և տվյալ թատրոնական կողեկտիվի աշխատանքի ստեղծադրծական շրջանը: Մենք խորհուրդ ենք տալիս, թե ուժիսյորին և թե ստեղծագործական կողեկտիվին, պիեսը կարգալ մի շնչով: Իհարկե ուժիսյորը պարտավոր է շատ ու շատ անգամ կարգալ պիեսը, սակայն ամենաթանկագինը՝ առաջին ընթերցումն է, վորովհետև առաջին ընթերցման տպավորությունն անմիջական է և գրեթե անհնարին է լինում յերկրորդ անգամ ստանալ նույն այդ տպավորությունը: Հետևյալ ընթերցումների ժամանակ ուժիսյորը և դերասանը պիեսին մոտենում են իրացման տեսակետից, վերլուծման յենթարկելով տիպերը, դրությունները և այլն: Առաջին ընթերցման ժամանակ, նրանք մոտենում են վորպես սոսկ ընթերցողներ, առանց կանխակալ կարծիքների, վորով և նրանց տպավորությունը լինում է անմիջական: Այդ պահին բացակայում է ուժիսյորի և դերասանի անձնական ֆանտազիան, մի հանգամանք, վորը առհասարակ մեծ տեղ է գրավում դերասանական արվեստի մեջ: Այդ անհրաժեշտ է նրա համար, վորպեսզի կարողանաք պարզել այն հիմնական հատկությունները, վորոնք որգանապես բղխում են պիեսի էյությունից: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է վոր պիեսի առաջին ընթերցման ժամանակ մոռանաք, թե դուք ուժիսյոր կամ դերասան եք:

Հենց առաջին իսկ ընթերցումից հետո դուք աշխատեցեք գրի առնել այն տպավորությունը, վորը ձեզ վրա թողել է պիեսը: Որինակ՝ բնորոշեցեք հետևյալ խոսքերով՝ պայծառ է, ուրախ է, թեթև է, լուսավոր է, կամ ուրիշ գեպքում՝ մութ է, խավար է, կեղտոտ է, ախուր է, ստոր է և այլն:

Արձանագրել առաջին տպավորությունն անհրաժեշտ է նրա համար, վորպեսզի առաջիկա աշխատանքի ժամանակ հնարավորություն ունենաք համեմատելու և ստուգելու պիեսի այն հատկությունների հետ, վորոնք կառաջանան աշխատանքի պրոցեսին:

Յենթադրենք «Պեսպո» պիեսի ընթերցման ժամանակ դուք արձանագրել եք՝ մութ է, խավար է, և հետագա աշխատանքների ժամանակ մոռացել եք ձեր այդ ստացած տպավորությունը, կամ դերասանի ու ուժիսյորի զանազան անհիմն տրյուկների պատճառով պիեսի բնագրությունը շեղվել է նպատակից: Այդ դեպքում դուք հեշտությամբ կարողացել եք «սպանել» պիեսը և «Պեսպոն» դուրս է յեկել պայծառ, լուսավոր, թեթև: Այնինչ «Պեսպոն» իր հիմքում ամբողջովին պայքար է, վորը տարվում է անհավասար ուժերի միջև: Չնայած այն լուսավոր պայքարին, վորը տանում է Պեսպոն, այնուամենայնիվ տերող դույնը—երականությունը «Պեսպո» պիեսի մեջ—խավար է, մութ է:

Պիեսից ճիշտ տպավորություն ստանալու համար անհրաժեշտ է այն ստուգել կողեկտիվի միջոցով և յերբեք չհիմնվել անձնական տպավորությունների վրա:

Կողեկտիվում մի շարք ընկերներ (ուժիսյոր, դերասաններ և այլն) կարծիքների վրա հիմնվելով հեշտ

ե նախատեսել այն ամենը, ինչ անհրաժեշտ է առաջիկա աշխատանքների համար:

Հաճախ են դեպքերը, յերբ ուժիսյորները ուզում են իրենց գլխից վեր թռչել՝ հանկարծ տեսնում եք, վոր պիեսի ամբողջ բնույթը փոխվում է և դրաման սկսում է հնչել բեմից վորպես կոմեդիա և՛ ընդհակառակը:

ՊԻԵՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԹԵՄԱՅԻ ՅԵՎ ԻԴԵԱՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Յերբ արդեն ուժիսյորը ծանոթանում է պիեսին և վորոշ տպավորություն է ստանում, նա կարող է արդեն զբաղվել պիեսի վերլուծությամբ:

Վորոշել պիեսի թեման, այդ նշանակում է, վորոշել՝ թե կյանքի վրժիթները յերեվույթների մասին է խոսվում ավյալ պիեսում:

Իրանից հետո ուժիսյորը և դերասանական կուլլեկտիվը պարտավոր են վորոշել պիեսի իդեան:

Վորոշել պիեսի իդեան, նշանակում է պատասխանել հետևյալ հարցերին — Ի՞նչ է ասվում պիեսում յեղած յերեվույթների մասին, ի՞նչ մտտեցում ունի հեղինակը իր պիեսում նկարագրած յերեվույթների նկատմամբ:

Թեմայի և իդեայի վորոշման խնդիրը ամենապատասխանատու աշխատանքն է, ուստի թե ուժիսյորը և թե դերասանական կուլլեկտիվը այդ խնդրին պետք է մոտենան ամենայն խորությամբ և լրջությամբ:

Յեթե ուժիսյորը կամ դերասանական կուլլեկտիվը ճիշտ չեն ըմբռնել բեմադրվելիք պիեսի թեման կամ իդեան, ապա նրանց հետագա աշխատանքը՝ կամ կհա-

կասի հեղինակին, կամ ներկայացման արժեքը կնշանանա:

Յեթե ճիշտ չըմբռնվի պիեսի թեման, ընականաբար ճիշտ չի ըմբռնվի նաև նրա իդեան: Հետևապես, թե ուժիսյորը և թե դերասանական կուլլեկտիվը չեն կարող ճիշտ կերպով ի հայտ բերել իրենց սեփական վերաբերմունքը գրական յերկի նկատմամբ, քանի վոր ճիշտ կերպով չի հասկացված իրեն իսկ հեղինակի վերաբերմունքը յերկի մեջ նկարագրած իրականության նկատմամբ:

Այդ խնդիրը բարդանում է նաև նրանով, վոր քննվող պիեսում կյանքի մեկ յերևույթի մասին չէ վոր խոսվում է: Այդ պիեսում բազմաթիվ յերևույթներ կան, վորոնք իրար զուգորդում են:

Ահա այստեղ է, վոր ուժիսյորը և դերասանական կուլլեկտիվը պետք է կարողանան ընտրություն կատարել — գտնել գլխավորը, առաջնորդող թեման, վորը զարգացնում է ամբողջ պիեսը: Սակայն այդ չի նշանակում, վոր մնացյալ թեմաները պետք է մոռացության արվին: Ընդհակառակը, անհրաժեշտ է (նայած տեսակարար կշիռն) նրանց դասավորել վորպես յերկրորդական, յերրորդական թեմաներ և այլն:

Կարող են լինել դեպքեր (գլխավորապես հին կլասիկների դործերում), յերբ հեղինակի իդեան մեզ լիովին չի բավարարում, կամ այսօրվա մեր հասկացողությամբ ընդունելի չէ, կամ հեղինակն իր ժամանակ դրաքննության ճնշման տակ չի կարողացել բացահայտ կերպով ընտրել իդեան կամ պայքարի ձևերը: Այդ դեպքում մենք կարող ենք նոր մոտեցմամբ «բաց անել» հեղինակին և բեմադրել նրան այնպես, ինչպես ինքն է կա-

մեցել, կամ այնպես, ինչպես մեզ այսօր ավելի նպատակահարմար է, պահպանելով իհարկե, պատմական ճշտությունը:

Վերցնենք որինակի համար Սոււդուէկյանի «Պեպոն» և փորձենք վորոշել նրա թեման և իդեան:

Վճրն և «Պեպո»-յի թեման:

Վորպեսզի այդ հարցին կարողանանք պատասխանել, անհրաժեշտ է մեզ համար պարզել, ինչի մասին է կամ կյանքի ինչպիսի՞ յերեւոյթների մասին է խոսվում այդ պիեսի մեջ:

Նրա համար անհրաժեշտ կլինի համառոտ կերպով վերհիշել «Պեպո»-յի բովանդակությունը:

«Պեպոն» կարդալիս, մենք տեսնում ենք, վոր պիեսում մեկ թեմա չէ ընդգրկված. այն է՝ Պեպոյի պայքարը Զիմզիմովի դեմ, վորպես շահագործողի, այլ կան նաև Կեկելի վողբերգության, Պեպոյի ընտանիքի չքավորության և այլ խնդիրներ:

Ինչպես մենք վերը ասացինք, ուժիսյորը պետք է ընտրի գլխավոր թեման և նա դարձնի առաջնորդողը:

Վճր թեման մենք կարող ենք «Պեպո»-յի մեջ համարել առաջնորդողը:

Յեթե մենք գլխավոր շեշտը դնենք Կեկելի վողբերգության վրա, անշուշտ, մենք սխալ կգործենք: Այդ խնդիրը բոլոր գործող անձանց չի զիպչի. մենք դրանով «Պեպո»-յին կզրկենք սոցիալական իրլայն նշանակությունից:

Այդ տեսակետից բեմադրությունը շատ ավելի կշահի, յեթե մենք առաջնորդող թեման ընտրենք Պեպոյի պայքարը Զիմզիմովի դեմ և բեմադրության:

շեշտը դրա վրա դնենք: Այդպես վարվելով, մենք կտեսնենք, ինչպես գործող անձինք իսկույն կրատանվեն յերկու բանակի՝ աշխատավորների և հարստահարողների:

Այդ թեման տիպիկական է դառնում Թրիլիսիի 60—70-ական թվականների համար, ուստի և խոշոր սոցիալական կյանքի բնորոշ թեմա յե: Մեզ համար յելակետը պետք է դառնան Պեպոյի խոսքերը—«Ես ոսկի պատիրը, վուր սարքիլ իս, ում փուզով... հալար ինձ պեսներուն թախիլ իս, գանամ, քար ու կիրը միք արնով իս շաղղի, գանամ. գիփուճանց անկիրը արլանդվա իս արի ու հիմի ծանգր ու բարակ քիզ համանսամ ջեփ իս անում, ելի»:

Այդպիսով մենք վորոշեցինք յերեւոյթների այն շրջանակը, վորը Սոււդուէկյանի կողմից նկարագրված էր—այսինքն մենք պարզեցինք «Պեպո»-յի թեման:

Աշխատենք պարզել, թե ինչպես էր ինքը Սոււդուէկյանը վերաբերվում այն իրականությանը, վորը նկարագրել է իր «Պեպո»-յի մեջ: Պարզելով այդ, մենք պարզում ենք և պիեսի իդեան:

Գ. Սոււդուէկյանը, վորպես խոշոր ուսուցիտ արվեստագետ, իր ստեղծագործության մեջ արտահայտել է կեղեքված ժողովրդի բողոքն ու ընդվզումը սոցիալական անարդարության ու ճնշման դեմ: Նա հանդիսացել է մարդկության լավագույն կյանքի և յերջանկության շատագովը:

Սոււդուէկյանը մերկայնում է բուրժուազիայի և հատկապես առևտրա-վաշխառուական բուրժուազիայի ամբողջ զարշելի ելությունը:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր «Պեպո»-յի

հիմնական իդեան դառնում և «հալալ» աշխատանքի սկզբունքը, քրտինքով ձեռք բերած հացը, այլ վոչ «թալանով, ուրիշներին զրկելով» ձեռք բերած հարստությունը:

Սունդուկյանը մեծ սիրով և նկարագրում Պեպոյի աշխատանքային ուրը, նա մեծ ջերմություն և ներշնչել էլ այն տեսարաններին, վորտեղ վործում ու ապրում և Պեպոյի ընտանիքը: Այդ վերին աստիճանի բյուրեղ, մաքուր ընտանիքը մեր առաջ պատկերանում և մեծ գեղարվեստականությամբ:

ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԹԵՄԱՅԻ ՈՒ ԻԴԵԱՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Այժմ, յերբ մենք արդեն մի որինակ բերելով ծանոթացանք, թե ինչպես և վորոշվում պիտի թեման և իդեան՝ ուժիսյորը և ստեղծագործող կոլլեկտիվը պետք և անցնեն աշխատանքի հետևյալ փուլին: Ինչպես կարող և ստեղծագործող կոլլեկտիվը կամ ուժիսյորը կատարել իր հեռագա աշխատանքը, յեթե նրանք ծանոթ չեն այն իրականությանը, վորը հիդինակը նկարագրել և յերկի մեջ: Այդ աշխատանքը առավելագույն չափով վերաբերում և ուժիսյորին, վորովհետև նա դեկավար դեր ունի:

Միայն իրականության մանրակրկիտ ուսումնասիրությամբ և, վոր կարելի յե ստեղծել արժեքավոր ներկայացումներ:

Յերբ արդեն պարզվում և պիտի թեման և իդեան, մի առ ժամանակ կարող եք թողնել պիտեղ և սկսել ուսումնասիրել այն կյանքը, իրականությունը,

վորից նյութ և վերցրել հեղինակը տվյալ պիտի համար: Ինչքան հեռու յե լինում դարաշրջանը մեզանից, այնքան դժվար և լինում ուսումնասիրել այն և պարզ և, վոր այնքան մեղանից ավելի աշխատանք և պահանջում:

Անգամ, յեթե պիտեղ նկարագրում և մեր խորհրդային շրջանը, նույնիսկ այսօրվա ուրը և դուք ել մասնակից եք այսօրվա մեր սոցիալիստական շինարարությանը, — դարձյալ անհրաժեշտ կլինի ուսումնասիրել այն, գարգացնել դիտողականությունը, ունեցած պաշարն ել ավելի հարստացնել: Դեպքեր են պատահում, յերբ մի շարք յերևույթներ, անմիջապես կապված չլինելով ուժիսյորի կամ գերասանական կոլլեկտիվի պրակտիկայի հետ, աչքաթող են արվում:

Անշուշտ, մենք պիտում կատարվող իրադարձությունները պետք և դիտենք այն իրականության մեջ, վորտեղ կատարվել են նրանք: Յեթե մենք ուզում ենք բեմադրել քաղաքացիական կոմիտեի գրվագներից մի պիտե, ապա մենք պետք և ծանոթանանք այն առատ նյութերի հետ, վորոնք շոշափում են այդ խնդիրները: Կինի դա գրական նյութ, կամ ֆոտո-նկարներ, կամ կերպարվեստի յերկեր: Մի խոսքով՝ անհրաժեշտ և հարըստացնել մեր դիտելիքներն այն ամենով, ինչ այսօր մենք ձեռքի տակ ունենք:

Յենթագրենք, թե մենք ուզում ենք բեմադրել Սունդուկյանի «Պեպոն»: Ամենից առաջ մենք պետք և ծանոթանանք Անդրկովկասի և մասնավորապես, Թբիլիսիի 60—70 թվականների սոցիալ-քաղաքական և տնտեսական կյանքին: Անցյալ կյանքը լավ կարող են լուսաբանել նաև պատմական փաստաթղթերը: «Պեպո»-յի

բեմադրութեան ժամանակ անհրաժեշտ ե լավ ուսում-
նասիրել Սուեդոսկայանի այլ գործերը, որինակ՝ «Բան-
դած ոջախը», «Ելի մեկ գոհ», «Նաթարալա» պիեսնե-
րը: Դրանք այն պիեսներն են, վորոնք մեր առաջ
բաց են անում թրխիսի 60—70-ական թվականների
սոցիալական կյանքի վորոշ պատկերը: Այդ պիեսնե-
րում ինչպես և «Պեպո»-յում Սուեդոսկայանը խորը ռեա-
լիստականութեամբ պատկերել և վաշխառու-կապի-
տալիստական ընտանեկան կյանքը, նրա փոխհարաբե-
րութեանները, նիստ ու կացը, հայրերի և վորդիների
պայքարը, այն սոցիալական հակասութեանները, վո-
րոնք գոյութեան են ունեցել այն ժամանակները: Բա-
ցի Սուեդոսկայանի գրվածքներին, անհրաժեշտ կլինի ծա-
նոթանալ և ուսումնասիրել այն ժամանակվա նկարիչ-
ների, քանդակագործների գործերը: Այդ բոլորը
կհարստացնի մեր գիտելիքները և շատ արդյունավետ
կլինի բեմադրութեան համար:

Այս կարգի յերկարատև ու տքնաշան աշխատան-
քը մեծ չափով ոգնում է պարզելու ներկայացման ի-
դեան:

Կասկածից դուրս է այն, վոր թե ուժիսյորը և
թե դերասանական կոլլեկտիվը, ուսումնասիրելով պատ-
մական գրականութեանն ու նյութերը, պետք է ըմ-
բռնեն և հասկանան պատկերած դարաշրջանը մեր այս-
որվա առաջավոր գաղափարի և գիտութեան լուսարա-
նութեամբ:

Մենք, վոր գինված ենք Մարքս-լենինյան-ստա-
լինյան ուսմունքով, շատ ավելի խորը և ճիշտ կարող
ենք գնահատել վորևէ պատմական յերևույթ, քան այդ
արել են այլ գաղափարներ ունեցող պատմաբանները:

Այժմ արդեն, յերբ պիեսի թեման յուրացված է
վոչ միայն հեղինակի տեքստի միջոցով, այլև ամ-
բողջ դարաշրջանի ուսումնասիրութեամբ—ապա հենց
այդ դառնում է ներկայացման թեման:

Այն մտքերը և զգացումները, վորոնք առաջ են
յեկել ստեղծագործող կոլլեկտիվի մեջ, պիեսում նկա-
րագրած իրականութեանն ուսումնասիրելու ժամանակ,
և այն վերաբերմունքը, վոր կոլլեկտիվում առաջացել է՝
կենդանի իրականութեանը կամ պատմական փաստա-
թղթերը ուսումնասիրելու ժամանակ—կազմում է հենց
ներկայացման իդեան: Այդպիսով մենք տեսնում ենք,
վոր ներկայացման իդեան առաջանում է ստեղծագոր-
ծող կոլլեկտիվում իրականութեան ուսումնասիրութեան
հետևանքով:

Յերբ ռեժիսյորը և ստեղծագործական կոլլեկտի-
վը կարողեն պիեսի իդեան և այն իդեան, վորը ռեժի-
սյորը և կոլլեկտիվն ուզում են անցկացնել ներկայաց-
ման մեջ ապա անհրաժեշտ կլինի պարզել, թե վոր-
քանով է տարբերվում հեղինակի իդեան ստեղծագոր-
ծող կոլլեկտիվի իդեանից: Յերբ հեղինակի և ստեղծա-
գործող կոլլեկտիվի իդեանները զուգադիպում են, այդ-
պիսի դրութեանը շատ հեշտացնում է բեմադրութեան
գործը: Կարող է լինել և հակառակը, վոր հեղինակի
և ստեղծագործական կոլլեկտիվի իդեանները չզուգադի-
պեն:

Այդ դեպքում անհրաժեշտ է պարզել չափը և յեթե
տարածայնութեանը չափից դուրս մեծ է, լավ կլինի,
վոր ստեղծագործական կոլլեկտիվը հրաժարվի այդ
պիեսը բեմադրելուց: Փոքրիկ տարածայնութեանների
դեպքում, հարկավոր կլինի իրեն հեղինակի հետ հա-

մաձայնության գալ, իսկ յեթե հեղինակը կենդանի չե, ապա այդպիսին պետք է արվի բեմական միջոցներով, սակայն առանց տեքստի ավելացման: Ռեժիսորը և դերասանները, յեննելով ներկայացման իդեայից, կարող են գործողության վորոշ մոմենտները ավելի սքրել, կամ այս ու այն կերպարին տալ առավել նշանակութիւն:

«Պեպո»-յի բեմադրության ժամանակ մենք կարող ենք արձանագրել, վոր հեղինակի իդեան և ստեղծագործող կոլլեկտիվի իդեան միանգամայն զուգադիպում են, միայն անհրաժեշտ կլինի վորոշ տիպերի սոցիալական նշանակութիւնն ավելի սքրել: Որինակ, Զիմզիմովի տիպը անհրաժեշտ կլինի ընդհանրացնել, զարձնելով նրան վորպէս իր դասակարգի տիպիկ ներկայացուցիչ, այլ վոր վորպէս անհատ Զիմզիմով:

Այդ յերբեք չի նշանակում, թե անհրաժեշտ է վորեւ տեքստ ավելացնել անմահ Մունդուկյանի յերկին: Վնչ: Այլ անհրաժեշտ կլինի դերասանին՝ իր կերպարը կառուցելիս, մտածել ավելի խորը մշակման մասին, իսկ ռեժիսորին անհրաժեշտ կլինի համապատասխան բեմական գրութիւններ ստեղծել:

Ահա պիեսի այսպիսի մանրադննին վերլուծութիւնը մեծ չափով ողնում է մեզ պարզել ներկայացման իդեան, ներկայացման նպատակադրումը: Որինակի համար, յենթագրենք, թե մենք «Պեպո» պիեսի ներկայացման իդեան—նպատակադրումը հետևյալ կերպ ենք ձևակերպում.

«Բրտինքով ու աշխատանքով ձեռք բերած վաստակը միակ արգար վաստակն է և պասսիվ դիմացրության միջոցներն ընդգեմ կապիտալիստ—

տորուկները վոր մի դրական արդյունք չեն տա, և մինչև վոր չվերանա շահագործողների դասակարգը, չի ստեղծվի յերջանիկ կյանք»:

Այդպիսի ձևակերպումը մեզ մեծ ոգուտ կտա: Իսկ կլինի այն իդեան, այն միտքը, ինչ մենք ողնում ենք ներկայացման մեջ, ուրիշ խոսքով՝ դա կլինի այն գաղափարը, վորը հանդիսականը պետք է տանի իր հետ ներկայացումը դիտելուց հետո:


Յերբ մենք պարզում ենք ներկայացման իդեան, այն ժամանակ մենք անցնում ենք պիեսի գործող անձերի իդեոլոգիական արժեքավորմանը: Ամեն մի տիպի նկատմամբ մենք պետք է պարզ պատկերացում ունենանք, թե տվյալ գործող անձը հասարակական վժր շերտին է պատկանում: Արդյոք նա հասարակական այն խավին է պատկանում, վորն ոգուտ է տալիս մարդկութիւնը, թե՛ ընդհակառակը, նա ժողովրդի թշնամի յե:

«Պեպո»-յի գործող անձերին իդեոլոգիական գնահատման յենթարկելիս, մեր առաջ բացվում են յերկու հակադիր բանակներ՝ մեկը հարստահարողներ—Զիմզիմովը և նրա կողմնակիցները, մյուսը՝ հարստահարվողներ՝ Պեպոն, Կեկելը, Շուշանը, Կակուլին, Գիքոն:

Պիեսը բեմականորեն մարմնացնելու համար անհրաժեշտ է, վոր մենք ունենանք մեր վերաբերմունքը ամեն մի տիպարի նկատմամբ: Յեթե մենք «Պեպո»-յի տիպերը բաժանեցինք յերկու խմբի՝ հարստահարողներ և հարստահարվողների, ուրիշ խոսքով՝ նրանց իդեոլոգիական արժեքավորումը տվինք, ապա անհրաժեշտ է գտնել և բացահայտել այն պայքարը, վորը գոյութիւն ունի յերկու հակադիր կողմերի միջև:

Ընդհուպ մոտենալով այդ խնդրին, մենք պարզ կերպով կարող ենք նկատել, վոր հակադիր բանակ-

56230-66



ներն անդադար պայքարի մեջ են գտնվում: Ահա այդ պայքարի վերլուծութիւնը մեզ հնարավորութիւն կտա պարզելու գործող անձանց բնմական պատկերները: Մենք կարող ենք նկատել, վոր ամեն մի գործող անձ, իր գասակարգի շահերից յենելով, պայքարի յուրատեսակ ձևեր ե գործադրում:

Այդ իսկ պատճառով, վորպեսզի մենք կարողանանք ներկայացման իդեան հանդիտականին ճիշտ հասցնել, անհրաժեշտ ե պարզել, թե ի՞նչպիսի ուժեր են գործում պիտում ե վճիռ ուժն ե շարժում պիտաք: Բնմական լիզվով ասելով, մենք պետք ե գտնենք ներկայացման «միջանցիկ գործողութիւնը»:

ՄԻՋԱՆՑԻԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ ե նշանակում «միջանցիկ գործողութիւնը»: Այդ հասկանալու համար անհրաժեշտ ե նախ պատասխանել այն հարցին, թե ի՞նչ ե գործողութիւնն ընդհանրապէս: Մարդու ամեն մի արարքը, վորը հետապնդում ե վորոշ նպատակ—գործողութիւնն ե: Որինակ, մարդը վեր կացավ, մտեցավ պատուհանին ե փակեց ողանցքը: Իս գործողութիւնն ե: Մարդը կատարեց մի շարք արարքներ, վորպեսզի չհիվանդանա, ուրեմն, մարդու գիտակցական արարքը, վարքը—գործողութիւնն ե: Յեթի մարդը առանց մի վորեւ նպատակի թափառում ե, մենք չենք կարող դա գործողութիւնն համարել, վորովհետեւ գործողութիւնն ասելով, մենք պետք ե հասկանանք այնպիսի արարք, վորը գիտակցորեն կատարելով՝ մարդը հասնում ե իր առաջ դրած վորոշ նպատակին:

Այդպիսով, մենք վորոշեցինք, թե ի՞նչ ե գործողութիւնը: Բայց ի՞նչ ե նշանակում միջանցիկ գործողութիւնը: Միջանցիկ գործողութիւնն այն գործողութիւնն ե, վորն անցնում ե ամբողջ պիտի միջով: Միջանցիկ գործողութիւնը—դա այն ե, ինչ անում են մարդիկ ամբողջ պիտի ընթացքում: Ուրեմն, վորոշել միջանցիկ գործողութիւնը նշանակում ե հասկանալ, ի՞նչ են անում ե ի՞նչպիսի նպատակով են գործում պիտի գործող անձինք ամբողջ պիտի ընթացքում: Միջանցիկ գործողութիւնը—պիտի շարժիչ ուժն ե:

Պիտի միջանցիկ գործողութիւնը վորոշելու համար անհրաժեշտ ե, պիտաք կարգալուց հետո, մեր խոսքերով մի քանի անգամ պատմել պիտի բովանդակութիւնը: Մի քանի անգամ կրկնելուց հետո, դեն ձգել յերկրորդական խնդիրները ե թողնել հիմնականը, դըլխավորը: Այդ պետք ե անել այնքան անգամ, մինչեւ վոր պիտի ամբողջ բովանդակութիւնը ձևակերպվի յերկու-յերեք նախադասութեամբ: Յեթի նման քան կատարելու լինենք «Պեպո»-յի նկատմամբ, ապա մենք վերջիվերջո՝ կհանգենք հետեյալ յեղրակացութեան. Պեպոն պահանջում ե վաշխառու Զիմզիմովից իրեն հասանելիք պարտքը, իր արդար հարյուր «թումանը», քրոջը՝ Կեկելին ամուսնացնելու համար ե յերբ մերժում ե ստանում, բողոքում ե անարգարութեան դեմ: Ահա ե ձեր առաջ պարզ կերպով բացվում ե միջանցիկ գործողութիւնը:

Ինչպես ասացինք, ամեն մի գործողութիւնն պատասխանում ե յերկու հարցի՝ ի՞նչ են անում ե ինչ՞ու համար են անում (կամ ի՞նչ են ցանկանում): Ուստի, ի՞նչ են անում «Պեպո» պիտի մեջ: Պեպոն հետ ե պատ-

հանջում իր հոր կողմից Ձիմզիմովին տված հարյուր-
թումանը: Ինչո՞ւ համար ե այդ անում, կամ վճռն ե Պե-
պոյի ցանկությունը: Անում ե այդ կամ ցանկանում ե,
վորպեսզի իր քրոջը՝ Կեկելին ամուսնացնի:

Վորոշելով միջանցիկ գործողությունը, մենք վո-
րուշում ենք նաև միջանցիկ հակագործողությունը՝
Միջանցիկ գործողության և միջանցիկ հակագործողու-
թյան բաղխումը առաջ ե բերում կոնֆլիկտ: Այդ կոնֆլիկ-
տը, այդ բաղխումը հենց պիեսի հիմքն ե կազմում: Վոր-
տեղ չկա կոնֆլիկտ, այնտեղ չկա և պայքար, այնտեղ
չկա և գործողություն. իսկ վորտեղ գործողություն
չկա, այնտեղ չկա և պիես և թատրոն:

«Պեպո» պիեսի մեջ միջանցիկ գործողության
հիմնական ներկայացուցիչը Պեպոն ե: Միջանցիկ հա-
կագործողության ներկայացուցիչը— Ձիմզիմովը, վորը
մերժում ե Պեպոյին վերադարձնել հարյուր թումանը:
Առաջ ե գալիս կոնֆլիկտ Պեպոյի և Ձիմզիմովի միջև:

Միջանցիկ գործողության և հակագործողության
հիմնական ներկայացուցիչներին վորոշելիս, մենք մնա-
ցած գործող անձանց դասավորում ենք ըստ միջանցիկ
գործողության կամ հակագործողության պատկանելիու-
թյան: Միջանցիկ գործողությունը, դա այն շարժիչ
ուժն ե, վորը սրբնթաց կերպով տանում ե ներկայա-
ցումը դեպի ներկայացման իդեան:

ՊԻԵՍԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՄԱՍԵՐԻ

Ստեղծագործող կոլլեկտիվի հետևյալ աշխատանքը
պիեսը մասերի բաժանելու մեջ ե: Ի՞նչ ե նշանակում
բաժանել պիեսը մասերի: Դրամատուրգիորեն քիչ թե

շատ ճիշտ կառուցված ամեն մի պիեսում կարելի յե
նկատել մի քանի դեպքեր, վորոնք կոտրում կամ բե-
կում են պիեսի ամբողջ ընթացքը: Պիեսում այդպիսի
դեպքերը սովորաբար լինում են վոչ ավելի քան յերե-
քից մինչև հինգ տեղ: Մեծ մասամբ այդ մասերը չեն
զուգահիստում հեղինակի կողմից արդեն բաժանած գոր-
ծողություններին: Բեկումը, այսինքն այդ մասերի սահ-
մանները լինում են գործողության մեջտեղում:

Շատ սակավ են այն դեպքերը, յերբ մասը վեր-
ջանում ե գործողության հետ միասին:

Սակայն մեզ անհրաժեշտ ե վոչ միայն ճշտորեն
ասհմանել այդ մասերը, այլև ճիշտ հասկանալ այն
իրադարձությունները, վորոնք կատարվում են այդ մա-
սերի մեջ և գտնել նրանց համար համապատասխան
դրություն արտահայտող անուններ:

Մասերին անուն տալը պետք ե անել խիստ զգուշ-
դա շատ կարևոր աշխատանք ե:

Մասի համար բնորոշ անուն գտնել, նշանակում ե
գտնել այնպիսի մի կարճ նախադասություն, վորը ճիշտ
վերաբերմունքի հետ միասին արտահայտի, թե տվյալ
մասում ի՞նչ պետք ե ներկայացվի: Այդպիսով մենք
վորոշում ենք, թե ի՞նչ ե ի վերջո ստանալու հանդի-
սականը տվյալ մասից:

Իհարկե, ամեն մի ստեղծագործող կոլլեկտիվ կա-
րող և նույն պիեսի նույն մասերին տարբեր անվա-
նումներ տալ: Ճիշտ անվանումը կախված ե տվյալ
ստեղծագործող կոլլեկտիվի պատրաստականությունից
և ուժիսյորի ճիշտ ղեկավարությունից:

Վորպեսզի այդ խնդրում մենք ունենանք վորոշակի
պատկերացում, անհրաժեշտ ե մի որինակ բերել: «Պե-

պո» պիտեը մենք կարող ենք բաժանել հետևյալ մասերի.

«Պեպո»-յի ռեժիսյորական առաջին մասն աջն է, յերբ Գիքոն հայտնում է Շուշանին ու Պեպոյին, վոր փեսացուն թողնում է Կեկելին, վորովհետև խոստացած դրամը՝ հարյուր թումանը ուշացնում են: Իրոք, այդ բողոքից փոխվում է մինչ այդ բեմի վրա յեզած գործողության ընթացքը: Պեպոն, Շուշանը յեւք են փնտնում այդ նեղ դրությունից դուրս գալու և Կեկելին խայտառակությունից ազատելու համար:

Յերկրորդ մասն աջն է, յերբ Պեպոն հույս ունենալով, վոր Զիմզիմովը կհասկանա իրերի դրությունը (Կեկելի նշանադրությունը քանդվում է), կզադրության սրությունը և ընդառաջելով Պեպոյին, կկերպարաձնի նրա հարյուր թումանը: Սակայն Զիմզիմովը մեղժում է: Այս մասումն է, վոր Պեպոյի առաջ բացվում է գիշատիչ—հարստահարողների աշխարհն իր ամբողջ մեղկությամբ և նա, անիծելով Զիմզիմովին, դուրս է գալիս նրա հարկի տակից:

Յերրորդ մասն աջն է, յերբ Գիքոն հայտնում է, վոր բարաթը գտնվել է, գործողության գիծը նորից փոխվում է:

Չորրորդ մասն աջն է, վոր Զիմզիմովը Պեպոյին դատի յե տալիս անպատվության համար և դատարանը վորոշում է Պեպոյին բանտ նստեցնել: Նորից գործողության գիծը բեկվում է, ստեղծվում է այնպիսի մի անելանելի դրություն, վոր անգամ բարաթը ձեռքերին, հարկադրված պետք է հաշտվեն «որենքի» հետ և Պեպոն պետք է բանտ գնա:

Հինգերորդ մասն աջն է, յերբ Զիմզիմովն իմանում է բարաթը լույս ընկնելու մասին, խայտառակությունից խուսափելու համար առաջարկում է Պեպոյին հաշտվել՝ անգամ ավելին վճարելու առաջար-

կով: Պեպոն մերժում է, համաձայնվում է բանտ նստաել ասելով բարաթով «պիտի կարիմ յես սրա (Զիմզիմովի) դուլսը»:

Այժմ փորձենք գտնել մասերի համար համապատասխան անուններ: Ինչ ըովանդակություն ունի առաջին մասը: Ինչի մասին է խոսվում այդ մասի մեջ: Առաջին մասի մեջ խոսվում է այն մասին, թե փեսացուն թողնում է Կեկելին և յեթե մինչև յերեկո չգըտնվի այդ հարյուր թումանը, ապա գործը «մոռլա» յե լինելու: Յեթե առաջին մասը մենք անվանենք՝ «պետք է փրկել Կեկելի պատիվը», ապա մենք մոտ կլինենք կանգնած այն միջանցիկ գործողությանը, վորը մենք վորոշել ենք «Պեպո»-յի համար:

Յերկրորդ մասը՝ աջն է, վորտեղ Պեպոն դիմում է Զիմզիմովին հարյուր թումանը հետ ստանալու և մերժում է ստանում: Պեպոյի համար պարզվում է սոցիալական անհավասարությունը: Նա զայրացած մոմենտին դիմակազերծ է անում Զիմզիմովին, վոր Պեպոյի նմաններին զրկելով ու շահագործելով, ձեռք է բերել իր ամբողջ հարստությունը: Այս մասը մենք մոտավորապես կարող ենք անվանել հետևյալ կերպ՝ «Պեպոն սխալվել է, կարծելով, վոր Զիմզիմովը մարդ է, նա չի կարող շահագործվողի բարեկամը լինել»:

Յերրորդ մասը, յերբ բարաթը լույս է ընկնում, մենք կարող ենք անվանել «անսպասելի ուրախություն»:

Չորրորդ մասում խոսվում է այն մասին, թե Զիմզիմովը Պեպոյին դատի յե ավել և դատարանը վորոշել է նրան կալանավորել:

Ինչքան էլ արդար լիներ Պեպոն, նա կարվածա-

տիրական-բուրժուական դատարանում մեղավոր պետք է դուրս գար, վորովհետև կաշառակեր բուրժուական դատարանը միշտ կապիտալիստների շահերն է պաշտպանում: Սխալված չենք լինի, յեթե չորրորդ մասն անվանենք՝ «կապիտալիստ—վաշխառուների արդարադատության «արդար» վճիռ»:

Հինգերորդ մասում, վորտեղ Զիմզիմովն իմացել է, վոր բարաթը գտնվել է, խայտառակությունից խուսափելու համար, ամեն մի կոմբինացիա յե առաջարկում Պեպոյին: Այս մասը մենք կարող ենք անվանել՝ «գայլը թակարդի մեջ»:

Կրկնում ենք, վոր ամեն մի ուժիսյոր և ստեղծագործող կոլլեկտիվ կգտնի մասերի համար իրենց ուզած անունները, այնպիսիք, վորոնք ավելի ցայտուն, բնորոշ կերպով կարտահայտեն իրենց վերաբերմունքը մասերի բովանդակության նկատմամբ:

Մեր բերած որինակներն ունեն միայն բացատրական նշանակություն:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԵՐՊՍՐԻ (ՈՒՐՍՁԻ) ՎՐԱ

Պիեսի գործող անձանց խարակտերները բնորոշելիս, մենք յեկակեա եյինք ընդունել այն, թե՛ վոր տիպարը դասակարգային դիրքերից մեզ հարագատ է և վորը՝ թշնամի: Պարզ է, այդ դեպքում բանվոր դասակարգի ներկայացուցիչները մեր առաջ պետք է պատկերվեն վորպես մարդկությանը ոգուտ ավող դրական մարդիկ, իսկ հակառակ բանակի ներկայացուցիչները՝ վորպես պարագիտներ, վորպես բացասական մարդիկ: Կերպարի (որբազի) մշակման ժամանակ, մեզ ա-

մենից առաջ անհրաժեշտ է ճշտել նրա սոցիալական, դասակարգային եյությունը: Խնդրի այդպիսի դրությունից յեխելով՝ մենք կարող ենք գտնել կերպարի ճիշտ միջանցիկ գործողությունը և նրա փոխհարաբերությունը մյուս պերսոնաժների հետ:

Տալ կերպարի սոցիալական, դասակարգային բնութագրումը—նշանակում է կառուցել կերպարը վոչ միայն վորպես մի անհատ իր յուրահատուկ գծերով, այլ կերպարն ընդունել վորպես վորոշ սոցիալական կատեգորիայի ներկայացուցիչ: Այդ նշանակում է, կերպարը հասկանալ ու ըմբռնել սոցիալական այն շրջապատի տեսանկյունից, վորտեղ նա ապրում ու գործում է: Այդ նշանակում է՝ գտնել կերպարի համար այնպիսի գծեր, վորոնք բնորոշ են այդ սոցիալական կատեգորիային:

Չկա բեմական կերպար, վորը չպատկանի այս կամ այն դասակարգին:

Քննելով «Պեպո» պիեսի տիպերը, մենք նկատում ենք, վոր սոցիալական, դասակարգային բնութագրման համար մեզ համար կարևոր է այն, վոր Պեպոն աշխատավոր ընտանիքի զավակ է, վորնա իր սեփական աշխատանքով ու քրտինքով է պահում ընտանիքը: Մոր այն հարցին, թե գնում է ու ամբողջ օրը սուն չի գալիս, Պեպոն պատասխանում է թե՛ «վա, եսենց վուր չանիմ, աստուծ մանանա խո չե դեեր զրգում միդ համա...»

Պեպոյի դերակատարը, Պեպոյի կերպարը կառուցելիս, պետք է հենվի պիեսի մի քանի հիմնական տե-

գերի վրա, վորոնք բնորոշում են Պեպոյին: Առաջին գործողութեան մեջ (տեսիլ Ե) Պեպոն ասում է «Զե, Պեպո, դուն հալալ տղա իս, հալալութիւնը սիրում իս, քու բանումն իլ հալալ կաց»: Բարոյապես շատ է մեծանում, յերբ այդ քրտինքով ապրող ձկնորսը պարզ կերպով տեսնում է սոցիալական անհավասարութեանը, յերբ նա իր կաշվի վրա դգում է հարստահարողին: Վերջրէք առաջին գործողութեան վերջում Պեպոյի ամբողջ մենախոսութեանը: Պեպոն տեսնելով շահագործողներէ դարշելի գեմքը, բացականչում է «դուն խո մարթ չիս, մարթկերանց համա կերակուր է ստեղծի քիզ աստուծ...»: Ապա հիշենք յերկրորդ գործողութեան (Պեպոյի ու Զիմզիմովի) զիալողի վերջին մասը և յերրորդ գործողութեան Պեպոյի վերջին խոսքերը: Սրանք բոլորը հսկայական նյութ են տալիս գերասանին Պեպոյի սոցիալական կերպարը կառուցելու համար:

Այն, ինչ կատարվում է Պեպոյի հետ—դա շատ տիպիկական է անցյալ դարի 70-ական թվականներէ համար: Այնպես վոր, այն ջերմ վերաբերմունքը, այն անհուն սերը, վոր մենք ունենք Սունդուկյանի անմահ հերոսի նկատմամբ, պետք է հղվի մոշ միայն դեպի Պեպոն և նրա ընտանիքը, այլն դեպի բոլոր պետները, ինչպես ինքը Պեպոն է ասում «հազար ինձ պեսներուն թախիլ իս, դանա...» Խնդրին այդ ձևով մտահնարով, Պեպոյի կերպարը մեր աչքում մեծանում է, նա դադարում է լինել ինչ վոր մի մարդ, վորը բողոքում է իր անձնական զժբախտութեան մասին: Պեպոն արտահայտում է ամբողջ իր նմանների—աշխատավոր ժողովրդի բողոքը: Նա գիմակազերծ է անում շահագոր-

ծողներին, վորոնք իր նմանների արյունը ծծելով են ապրում:

Պեպոյի հակառակորդը՝ Զիմզիմովը, Սունդուկյանի կողմից պատկերված է մեծ վարպետութեամբ: Մեղավալ դեպքում (յերբ գերասանի առաջ դրված է Զիմզիմովի կերպարը) քիչ պետք է հետաքրքրի այն հանգամանքը, թե նա ինչպիսի վերաբերմունք ունի հանգեպ իր ընտանիքը և այլն... Նրա սոցիալական կերպարն ամբողջացնելու համար ամենից առաջ կարևորն այն է, վոր մենք կարողանանք հանդես բերել Զիմզիմովի այն հատկութեանները, վոր հատուկ էյին անցյալ դարի 70-ական թվականների առևտրա-վաշխաւուական գասակարգին:

Զիմզիմովն աշխատում է հարստանալ ամեն մի ձևով, իհարկէ, առաջին հերթին ուրիշի աշխատանքի գծով: Իրա համար նա գործադրում է ամեն միջոց՝ հարստահարում է, խաբում, սուտ է խոսում, «հաշա յե ուտում» (ուրանում է) և այլն և այլն... Այն ամենը, ինչ վոր նա բերում է Պեպոյի գլխին, համարում է շատ սովորական յերևույթ: Իս առևտրականի քարոյական սրենսդրքի մեջ չի նշված վորպես բացասական յերևույթ: Սունդուկյանի մի ուրիշ հերոսը, Զիմզիմովի յերկվորյակը—Զամբախովը «Սաթարալա»-յի մեջ ասում է՝ «Ես մեր քաղքումը, վոր մեկ-մեկու չլին խափում, մի որ կանն մարթ ապրի, կանն վտուր-վտտի առչէ դնի»:

Այդ տեսակետից շատերը, յերբ ուզում են դուրս բերել հակառակորդին, կապիտալիստական դասակարգի ներկայացուցչին, դարձնում են նրան մի խրովիլակ: Իս սխալ է: Բուրժուային, կապիտալիստին պետք է պատ-

կերել այնպես, ինչպես նա յեղել է իրական կյանքում:

Զիմզիմովին բեմի վրա տեսնելով, հանդիսակաճանք պետք է լցվի ցասուժով հանդեպ այն կապիտալիստական սխտեմը, վորը դարեր շարունակ ճնշել է և արյուն-արցունք դարձրել աշխատավորի կյանքը:

Ահա այն սոցիալական բնութագրման որինակները, վոր մենք կատարեցինք «Պեպո»-յի յերկու գործող անձանց նկատմամբ:

Այժմ անցնենք գործող անձանց միջանցիկ գործողութեանը, այսինքն վորոշենք, թե ի՞նչ նպատակ է հետապնդում ամեն մի գործող անձ—ամբողջ պիեսի ընթացքում (այսինքն ամբողջ իր դերի ընթացքում):

Առանձին գործող անձանց միջանցիկ գործողութեան վորոշելը մեծ չափով դյուրին է դառնում այն պատճառով, վոր մենք արդեն բոլոր գործող անձանց դասավորել ենք ըստ պիեսի միջանցիկ գործողութեան: Սակայն ամեն մի կերպարի (որբաղի) համար անհրաժեշտ է ավելի ճշտել այն ձգտումները, վոր նա հանդես պիտի բերի դերի ձևավորման ընթացքում:

Վերցնենք, որինակ, Պեպոյին: Նրա միջանցիկ գործողութեանը միանգամայն զուգադիպում է պիեսի միջանցիկ գործողութեանը: Պեպոն իր արդար պահանջն է դնում Զիմզիմովի առաջ և յերբ մերժում է ստանում՝ բողբոջում, դիմակաղերժ է անում նրան: Հանուն արդարութեան, «հալալութեան» նա բանտ է նրստում, վորպեսզի վերջիվերջո կարողանա ապացուցել իր արդարութեանը և ինչպես ինքը՝ Պեպոն է ասում, յերրորդ գործողութեան վերջում՝ «Ու յես Պեպոն չեմ ըլի, թե դիպուճանց (հարստահարվածներէ—Վ. Վ.) ջիգրը չեմ հանի»: Պեպոն պատրաստվում է բանտից հետո նոր պայքարի յեղներ:

Զիմզիմովի միջանցիկ գործողութեանը հակառակ

է դնում պիեսի միջանցիկ գործողութեանը: Նա ամեն կերպ արգելադրում է, խոչընդոտներ է ստեղծում Պեպոյի առաջ, վորովհետև Պեպոն պիեսի միջանցիկ գործողութեան ներկայացուցիչն է: Յեւ այդ հակադիր գործողութեանից առաջ է գալիս կոնֆլիկտ:

Զիմզիմովի միջանցիկ գործողութեանը միևնույն ժամանակ պիեսի հակագործողութեանն է:

Հարստահարել, խաբել և բռնված ժամանակ կեղծել, քծնել, վորպեսզի խայտառակութեանից ազատվի: Ահա Զիմզիմովի միջանցիկ գործողութեանը, վորը միաժամանակ և պիեսի հակամիջանցիկ գործողութեանն է:

Մնացյալ գործող անձանց համար անհրաժեշտ է նույնանման ձևով գտնել ամեն մեկի առանձին-առանձին միջանցիկ գործողութեանները:

Այժմ, յերբ «Պեպո»-յի գործող անձանց սոցիալական բնութագրումը և միջանցիկ գործողութեանները գտել ենք, մեզ անհրաժեշտ է պարզել ամեն մի տիպարի վերաբերմունքը իր շրջապատի նկատմամբ: Այդ խնդրում պետք է նկատի ունենալ վոչ միայն մեկի վերաբերմունքը հանդեպ մյուսի, այլև ամեն մեկի վերաբերմունքը հանդեպ պիեսում տեղի ունեցած յերևույթներին:

Որինակ, մեզ շատ կարևոր է պարզել՝ ինչպես է Պեպոն վերաբերվում մոր, քրոջ, Գիգոյի, ընկերներին (Կակուլու) և այլոց հետ: Ինչպես Պեպոն կվերաբերվեր դեպի այն իրադարձութեանները, վորոնք տեղի յեն ունենում բեմից դուրս:

Պարզել կերպարի վերաբերմունքը—շատ կարևոր խնդիր է: Կերպար ստեղծելու հետագա ամբողջ աշխատանքը կախված է նրանից, թե վորքանով ճիշտ և խորը կերպով ենք մենք պարզել ամեն մեկի վերաբեր-

մունքը մյուսների և շրջապատում տեղի ունեցած իրա-
զարձությունների նկատմամբ:

Վերևում ասածները միայն որինակներ են և բե-
րեցինք այն նպատակով, վորպեսզի թե ուժիսյորը և
թե գերասանական կոլլեկտիվը հիշյալ խնդրի շուրջը
յերկար ու մանրամասն կանգ առնեն:

Յերը արդեն սոցիալական բնութագրումը արված
է և նրանց փոխհարաբերությունը պարզված — ուժի-
սյորը և գերասանական կոլլեկտիվն անցնում են վորո-
շելու կերպարի ինդիվիդուալ, անհատական, անձնա-
կան հատկությունները:

Նույն գասակարգի մարդիկ կարող են ունենալ
անհատական տարբեր հատկություններ: Որինակ, ինչ-
պես Ձիմզիմովը, նույնպես և շատ վաշխառուներ ձեզ-
տում են հարստանալ ուրիշների աշխատանքի հաշվին,
սակայն իրենց անհատական կյանքի մեջ, միևնույն
սոցիալական խավի մարդիկ տարբեր են լինում: Նրանց
մեջ կարող են լինել հիմար, կրթված, անկիրթ, ավյու-
նով, ծույլ և այլն: Նրանք կարող են տարբեր արտա-
քին տեսք ունենալ, նրանք կարող են լինել գեր, նի-
հար, բարձրահասակ, կարճահասակ, գեղեցիկ կամ տգեղ
և այլն: Բացի դրանից, գոյություն ունեն նաև ուրիշ
հատկություններ՝ ազգային, տարիքի, հյուսիսային կամ
հարավային կլիմաների մեջ ապրող և այլն: Այս բո-
լորի մասին պետք է խոսվի և յուրաքանչյուր կերպար
համապատասխան կերպով բնորոշվի:

Յերբեմն պատահում է, վոր անհատական հատ-
կությունները բղխում են հենց պիեսից: Որինակ, «Նա-
մուս» պիեսի մեջ խոսում են Սեյրանի և Սուսանի տա-

րիքի մասին և վոր իննը տարուց հետո պետք է պա-
կեն: Ձիմզիմովն իր ներկած մազերի մասին ինքն է
խոստովանում: Կակուլին ասում է Ձիմզիմովի մասին,
թե՝ «Ինչու նրա (Ձիմզիմովի) փորի վրա էլ մի դեղ չա-
ծենք»: Պետք է յենթադրել, վոր Ձիմզիմովը հաստա-
փոր մի մարդ է:

Բոլոր այն անհատական հատկությունները, վոր-
ոնք պարզ չեն պիեսից՝ պետք է լրացնեն ուժիսյորը
և գերասանական կոլլեկտիվը: Ամեն մի գերակատար,
յերբ կառուցում է կերպարը, պարզելով իր հերոսի ներ-
քին աշխարհը, նա կկարողանա տալ նաև այդ կերպա-
րին հարադատ արտաքին ձևավորում:

Ի վերջո, թե ուժիսյորը և թե գերասանները
պետք է հետևեն և պարզեն զործող անձանց զարգա-
ցումը՝ ներկայացման ընթացքում, գեպքերի ազդեցու-
թյունից առաջացած նրանց զործելակերպը: Որինակ,
Պեպոն փոխվում է, յերբ Ձիմզիմովը յերզում է անում,
վոր պարտք չի: Մինչ այդ, Պեպոն հեղ է, նրա ներքին
աշխարհը վորոշ չափով հանգիստ է, նա անհանգստա-
ցած է միայն Կեկելի ամուսնության հարցով. սակայն
յերբ Պեպոյի առաջ բացվում է յերզմազանց, խարբեա,
ուրացող Ձիմզիմովի ամբողջ դարձելի դեմքը — Պեպոն
հարձակողական դերք է բռնում: Այդ կտորի մեջ Պեպոն
զայրացած ասում է. «Այ, աստուծ ու յերզինք խոռվ
կենա գլխիդ» և թղթադրամը խփում է Ձիմզիմովի յե-
րեսին, շարունակելով՝ «հը, բռնե, աչկդ դի, կնգաա
համա իմքին կունենաս առնելու»: Կամ թե իր զործե-
լակերպի մեջ Ձիմզիմովը բոլորովին փոխվում է, յերբ
իմանում է, վոր բարաթը լույս է ընկել: Նա կարծես
թե դառնում է բարի, սոստաձեռն և այլն:

Այսպիսով, ուրեմն, անհրաժեշտ է մանրակրկիտ ուսումնասիրութեամբ պարզել կերպարին վերաբերող բոլոր հատկութիւնները:

ՏԵՔՍՏԻ ԲՍՑԱՀԱՅՏՈՒՄԸ

Յերբ արդեն ստեղծագործող կողմէկտիվը իր համար պարզել է թեման, իդեան, միջանցիկ գործողութիւնը, մասերի սահմանները, կերպարի բնութագրումը, փոխհարաբերութիւնը, նա կարող է համարձակ կերպով անցնել տեքստի բացահայտմանը, այսինքն՝ բեմական կտորներին, խնդիրներին և յենթատեքստերի վորոշմանը:

Տվյալ դեպքում ռեժիսորին անհրաժեշտ է այս աշխատանքը կատարել ամբողջ ստեղծագործող կողմէկտիվի հետ միասին: Բայց և այնպես ռեժիսորը այս աշխատանքը կատարելիս պետք է պատրաստած, մշակած լինի այն, և իրեն ստուգման յենթարկի ստեղծագործող կողմէկտիվի միաձուլ աշխատանքի ժամանակէջով չէ, յերբ ռեժիսորը պատրաստի աշխատանքով գալիս և փորձասենյակ և դերասաններին փաթաթում իր ստեղծագործութիւնը: Անհրաժեշտ է, վոր ռեժիսորն արթնացնի դերասաններին ֆանտազիան, վորպէսզի վերջինները—իրենք զգան և վորոշին բեմական կտորները, խնդիրները և յենթատեքստը:

Նման դեպքում աշխատանքն ավելի արդունավետ կլինի, նրանք որգանապես կտիրեն խնդիրներին: Այդ ժամանակ չի լինի ռեժիսորի կողմից աված խնդիրների մեխանիկական յուրացում, ինչպես այդ յերբեմն տեղի յե ունենում վորոշ թատրոններում:

Ռեժիսորը պետք է հետեի, վոր տեքստի դեռևս

չբացահայտված ժամանակ դերասանները չկարգան իրենց դերերը ինտոնացիայով, խաղալով, վորովհետև նրանք դեռ խաղալու բան չունեն, դեռևս չի պարզված, չի գիտակցված այն ամենը, ինչ պետք է կատարվի ամեն մի անձի կողմից ավյալ մասի սահմաններում:

Այդպիսի կանխախաղն անխուսափելիութենն դերասանին մղում է ստեղծագործութեան ամենավտիւրեքիմ թշնամու—շտամպի գիրկը: Շտամպը—դա կանխախաղի մի քանի պատրաստի պրիոմներ են (բարկութիւն, լաց, ծիծաղ և այլն), վորոնք վոչ ստեղծագործող, արհեստավոր (փեշակավոր) դերասանը գործադրում է ամեն մի գեր խաղալու ժամանակ:

Ամեն մի կերպարին՝ ասենք, լացը, ծիծաղը և բոլոր հոգեբանական յերևույթները տարբեր կերպով են արտահայտվում, նայած նրա տարիքին, ազգութեանը և, ի վերջո, նայած նրա ավյալ ըոպեյի հոգեկան կացութեանը: Այնպես վոր, նախքան խաղալը պետք է պարզ լինի այդ ամենը և հետո միայն դրսեվորվի:

Տեքստը անդիր պետք է անել այն ժամանակ, յերբ արդեն այդ տեքստը բացահայտված է: Այն ժամանակ դերասանը, իրօք վոր ճիշտ զգում է թե ինչ՞ն և ինչ մտքով (յենթատեքստով) է ասում իր պատկերած կերպարի այս կամ այն խոսքը: Միայն այդ դեպքում տեքստը կենդանանում է և, դերասանը հասկանում է տեքստի մեջ թաղնված բովանդակութիւնը:

ԲԵՄԱԿԱՆ ԿՏՈՐ

Յերբ մենք պիեսը բաժանում ենք մասերի, ապա նկատում ենք, վոր այդպիսի մասեր պիեսի մեջ լինում

են, ինչպես վերևում ասացինք, սովորաբար յիւրեքից-հինգ: Իրանք այն խոշոր իրադարձութիւններն ու դեպքերն են, վորոնք բեկում են պիեսի ընթացքը:

Սակայն ամեն մի պիեսում՝ բացի խոշոր դեպքերից, տեղի յեն ունենում բազմաթիւ մանր դեպքեր: Այդ մանր դեպքերն ու իրադարձութիւնները չնայած նրան, վոր չեն բեկում պիեսի գործողութեան ընթացքը, բայց և այնպես գործողութեան զարգացման մեջ մի ինչ վոր նոր բան են մտցնում:

Ուրեմն՝ սկզբում մեր նշած մասերը, իրենց հերթին, բաժանվում են ավելի մանր մասերի, վորոնց մենք անվանում ենք բեմական կտորներ: Վեր դեպքերն են, վոր պիեսի այս կամ այն մասը բաժանում են կտորների: Ընդհանրապես, յերբ գործող անձ և դալիս բեմ, սկսվում և մի նոր կտոր:

Սակայն միայն նոր գործող անձի մուտքով չէ, վոր փոխվում և բեմական կտորը: Որինակ, «Պեպո» պիեսի առաջին գործողութեան մեջ, յերբ Պեպոն կատակներ և անում Գիքոյի հետ, հանկարծ Շուշանն ասում և Պեպոյին, թե Գիքոն «փիս խնքար և իմացի մեր փեսի դէյքը»—իսկույն փոխվում և բեմական կտորը: Կամ թե, յերբ Կակուլին ներս և գալիս ուրախ, զվարթ Օոր գազելու, որ ուտելու» արամազրութեամբ և Պեպոն նրան հայտնում և իրենց գլխի յեկածը—իսկույն փոխվում և բեմական կտորը:

Մի խոսքով, անհրաժեշտ և պիեսի խոշոր մասերը բաժանել կտորների և այդ կտորների համար գտնել համապատասխան անվանումներ: Կտորի համար անուն գրտնելը, ինչպես դա ցույց էր տրված մասերի համար անուն գտնելու ժամանակ, նույնպիսի կարևոր աշխատանք է:

Ամենազլխավորը—անուն գտնելու պրոցեսն է, վորովհետև անուն գտնելու ժամանակ, ամենից առաջ մենք քաջ պատկերացնում ենք այն բովանդակութիւնը, վորը պետք և ներկայացվի հանդիսատեսի առաջ:

ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԲԵՄԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Անհրաժեշտ և պարզել և հասկանալ, թե ինչ և նշանակում բեմական խնդիր: Ամեն մի գործող անձ, ինչպես ասացինք, ունի իր միջանցիկ գործողութիւնը: Որինակ, Պեպոյի միջանցիկ գործողութիւնն այն է, վոր նա վաշխառու Զիմզիմովից պահանջում և հարցուրթում և յերբ մերժում և ստանում, բողոքում և անարդարութեան դեմ: Սակայն այդ բողոքը կատարելու համար նա անագին գործողութիւններ և կատարում. որինակ՝ հանգստացնում և Կեկելին, զսպում և Կակուլուն, հանդիպում և Զիմզիմովի հետ, դատարան և դնում և այլն և այլն: Մի խոսքով, մենք տեսնում ենք, վոր Պեպոն՝ կատարում և մի շարք խնդիրներ: Բոլոր այդ խնդիրները բղիւում են նրա միջանցիկ գործողութիւնից: Իրոք, յեթե նա վոչ մի պահանջ չունենար Զիմզիմովից, նա չէր գնա նրա մտա: Կամ յեթե չլինէր Կեկելի խայտառակութեան խնդիրը, նա այդպես արագ կերպով չէր ընդհարվի Զիմզիմովի հետ և այլն: Նման ձևով մենք կարող ենք ամբողջ պիեսի ընթացքում գտնել բոլոր գործող անձանց բեմական խնդիրները:

Իսկ գործող անձի խնդիրը—գործողութեան այն մասն է, վոր նա կատարում և բեմական կտորի ընթացքում:

Բեմական խնդիրը բաղկացած է յերեք տարրից (Ելեմենտներից):

Վորո՞նք են այդ յերեք տարրը:

Բեմական խնդիրը վորոշելու համար անհրաժեշտ է պատասխանել յերեք հարցի՝

1. Ի՞նչ է եմ յես անում (գործողություն):

2. Ի՞նչն է համար եմ յես այդ անում, կամ ի՞նչ է եմ յես ուզում (ցանկություն):

3. Ի՞նչպե՞ս էմ յես այդ անում (հարմարումը):

Առաջին յերկու ելեմենտը, այն է՝ գործողությունը (ի՞նչ էմ յես անում) և ցանկությունը (ինչ էմ յես ուզում) պետք է պարզ կերպով վորոշվեն դերի վերլուծման ժամանակ:

Յերրորդ ելեմենտը—հարմարումը (ինչպե՞ս էմ յես այդ անում) նախորոք չպետք է վորոշվի: Հարմարումը պետք է առաջ գա ինքնաբերաբար, ինքն իրեն, խընդիրների ճիշտ կատարման և խաղակիցների հետ ունեցած շփման ժամանակ:

Այսպիսով, դերասանը դերի մշակման աշխատանքը սկսելիս, պետք է պատասխան տա առաջին յերկու հարցերին: Պետք է վորոշվի նրա գործողությունը և ցանկությունը: Յերրորդ հարցի պատասխանը արվում է ինքնին աշխատանքի ընթացքում:

Վերցնենք մի վորևե որինակ «Պեպոն»-ից: Յերկրորդ գործողության մեջ Պեպոն գալիս է Ջիմզիմովի մոտ խնդրելու հարյուր թումանը իր քրոջը՝ Կեկելին ամուսնացնելու համար: Նրա գործողությունն է—Ջիմզիմովի մոտ գալը, նրա ցանկությունն է—հարյուր թուման ստանալը: Դրա համար նա համարձակություն է ձեռք բերում գալ ուղղակի Ջիմզիմովի տունը, նա ընդհարվում է ծառաների հետ, վորոնք չեն ուզում նրան ներս թող-

նել, նա ուղղակի դնում է Ջիմզիմովի առաջ իր հարյուր թումանի խնդիրը և այլն և այլն... Մի խոսքով՝ նա կատարում է միշտ ք գործողություններ իր ցանկությունն ի կատար ածելու համար: Իսկ ցանկությունն է հարյուր թումանը հետ ստանալը, վորպեսզի Կեկելին ազատի խայտառակությունից: Այդպես էլ մենք կվորոշենք Պեպոյի խնդիրը՝ Պեպոն ամեն միջոց գործադրում է, վորպեսզի փրկի իր քրոջ պատիվը:

Թե ինչպե՞ս Պեպոն այդ կասի, այսինքն՝ ինչպե՞ս նա կհամոզի, ի՞նչ կերպ կմոտենա Ջիմզիմովին, վախեցնելով նրան, թե՞ սիրալիրությամբ, այդ կպարզվի Ջիմզիմովի հետ ունեցած խոսակցության ժամանակ և նրանից, թե՞ ի՞նչ վերաբերմունք ցույց կտա Ջիմզիմովը՝ Պեպոյի գործողությանը և ցանկությանը:

Բերած ուրինակները միանգամայն բավական են, վորպեսզի դերասանը պարզ պատկերացում ունենա, թե ի՞նչ պետք է լինի ամեն մի բեմական կտորի մեջ, ի՞նչ է նա ցանկանում և ի՞նչ է դրա համար անում: Ուրեմն չի կարելի նախորոք վորոշել, թե ինչպես պետք է դերասանն այդ գործողությունն իրականացնի: Ինչպես նա պետք է կատարի, այսինքն «հարմարվելը»—այդ լինելու յե դերասանի՝ իր խաղակցի հետ ունեցած փոխհարաբերության, բեմական խնդիրը կատարելու պրոցեսի արդյունքը:

Բեմական խնդրի ճիշտ կատարումը առաջ կբերի բեմական ճիշտ հույզ-եմոցիա:

Այսպիսով ստեղծագործող կուլլեկտիվը պետք է իմանա, վոր չի կարելի հույզը (տանջանք, ուրախություն, ախրություն և այլն) խաղալ ինչպես հույզերը,

նույնպէս և նրա արտահայտման ձևերը յերկար պրո-
ցեսի արդշունք են:

Դերասանից միանգամից արդշունք պահանջելու
իրավունք չունենք: Աշխատանքն այնպէս պետք է կաղ-
մակերպել, վոր նրանց ճիշտ կատարման հետևանքով
ինքնաբերաբար առաջացնի անհրաժեշտ հուշը—եմո-
ցիան:

Նախ՝ մարդն գտնում է վորոշ ցանկութիւն, ապա
ցանկութիւնը ծնում է այս կամ այն գործողութիւնը:
Գործողութիւնն իրականացնելու հետևանքով առաջ է
գալիս այս կամ այն հուշը—եմոցիան: Յետե կատար-
վում է ցանկութիւնը, ապա առաջ է գալիս ուրախու-
թյան հուշը, յետե խոչընդոտներ և հարուցվում, առաջ
է գալիս տխրութիւն, սրտնեղում և այլն...

Անհրաժեշտ է լավ հասկանալ գործողութիւն և հուշ-
զի մեջ յեղած տարբերութիւնը:

Ամեն մի գործողութիւն տարբերվում է հուշվից
նրանով, վոր գործողութիւն մեջ մեծ տեղ է բռնում
կամքը: Համողել, ջղայնացնել, բարկանալ, գովել, հայ-
հոյել և այլն—գրանք բոլորը բայեր են, վորոնք ար-
տահայտում են այս կամ այն գործողութիւնը: Վորո-
շելով խնդրի առաջին ելեմենտը (գործողութիւնը),
այսինքն՝ պատասխանելով «ի՞նչ եմ յես անում» հար-
ցին, մենք կարող ենք ասել՝ «յես համոզում եմ (մե-
կին), յես ձեռք եմ առնում, յես բարկանում եմ, յես
գովում եմ, յես ջղայնանում եմ» և այլն...

Տխրել, ուրախանալ, վշտանալ, հիւսնալ, տանջվել
սիրել, ատել և այլն—գրանք բայեր են, վորոնք հուշ
են արտահայտում: Ուրեմն՝ «ի՞նչ եմ յես անում» հարցի
պատասխանը չի կարող լինել նման խոսքեր՝ «տըխ-

րում եմ, վիրավորվում եմ, ուրախանում եմ, սիրում
եմ» և այլն: Այդ խոսքերը գործողութիւն չեն վորո-
շում. նրանք պատասխանում են «ի՞նչպիսի գրութիւն
մեջ եմ յես գտնվում» հարցին, իսկ դա կարող է լինել
այն ժամանակ, յերբ գործողութիւն է կատարված:

Մենք պետք է մի բան լավ հասկանանք և
յուրացնենք, վոր այսպէս ասած, «ընդհանրապէս»,
վերացական հուշ գոյութիւն չունի: Կարելի չէ բնո-
րոշել այս կամ այն հուշը, բնորոշել միայն այն ընդ-
հանուրը, վորը յերևան է գալիս նման դեպքերում մար-
դուս մեջ առհասարակ: Բայց դա զգացմունքի միայն
բնորոշման հասկացողութիւնն է, այլ վոչ իրական հուշ-
ը: «Ինքնին» հուշը վերաբարեկալու ցանկութիւնն
անխուսափելիորեն կտանի դեպի շտամպը: Այդ դեպ-
քում պետք է միայն ընդորինակվի հուշի սովորական
պատկերացումը: Որինակ, «զայրույթը» սովորաբար
պատկերացնում են բղավոցով, ատամները ցուց տալով,
աչքերը դեպի յերկինք հանելով, կրծքին ուժեղ հարված-
ներ տալով և այլն: Իսկ գուցէ, հենց այդ դեպքում, այդ
«զայրույթի» զգացմունքը պետք է արտահայտվի մի-
այն նրանով, վոր մարդը պետք է գունատվեր և
սկսեր ցածր խոսել և այլն:

Դերասանական խնդիրը փոխվում է այն ժամա-
նակ, յերբ փոխվում է խնդրի յերկրորդ ելեմենտը—
ցանկութիւնը: Միայն առաջին ելեմենտի փոփոխումը
դեռևս չի փոխում խնդիրը: Մի խնդրի ընթացքում
(և մի բեմական կտորի) գործող անձը կարող է մի քա-
նի անգամ փոխել գործողութիւնը (առաջին ելեմեն-
տը), սակայն «ցանկութիւնը» մնում է նույնը: Այդ
բոլոր գործողութիւններն արվում են միայն մի նպա-

տակի հասնելու համար: Իս մի խնդիր և: «Յանկու-
թյան» փոփոխումը փոխում է խնդիրը և կտորի սահ-
մանն է հանդիսանում, վորովհետև միևնույն ժամա-
նակ փոխվում է այդ կտորի մեջ բոլոր գործող ան-
ձանց խնդիրները:

Յեթե մեկ գործող անձը փոխում է խնդիրը, ու-
րեմն, նա արդեն այլ կերպ է ազդում իր խաղակից-
ների վրա, ապա բեմական շփման որոնքի հիման վրա,
պետք է ասել, վոր նույնպես բոլորի խնդիրներն են
փոխվում:

Վերցնենք Պեպոյի և Զիմզիմովի նույն հանդի-
պումը յերկրորդ գործողության մեջ: Պեպոյի ցանկու-
թյունն է յեղել Զիմզիմովից հարյուր թուման հեռ
ստանալը, վորպեսզի իր քրոջը՝ Կեկեյին ազատի խայ-
տառակությունից: Յերբ Պեպոն վերջնական մերժում
է ստանում, անգամ յերբ Պեպոն Զիմզիմովին յերզվել
է տալիս, ապա Պեպոյի ցանկությունը փոխվում է: Պե-
պոյի մոտ այլևս չի մնում առաջին ցանկությունը. նա
այժմ ցանկանում է անպատվել Զիմզիմովին, վորպես
ուրացողի, սրիկայի, շահագործողի և այլն, և այլն: Այդ-
պես ուրեմն՝ մի գործող անձը փոխեց իր խնդիրը—
փոխվեց նաև Զիմզիմովի խնդիրը: Իրա համար Պեպոն
գործադրում է մի շարք գործողություններ, որինակ՝
հայհոյում է, «բախշած» դրամը յերեսին և տալիս և
այլն:

Փոխվեց Պեպոյի ցանկությունը, բնականաբար
փոխվեց և խնդիրը, փոխվեց խնդիրը—փոխվեց և բե-
մական կտորը: Բոլորովին այլ բեմական կտոր է, յերբ
Պեպոն խոսում է Զիմզիմովի հետ փեսացույի կողմից Կե-
կեյին թողնելու մասին, բոլորովին այլ՝ յերբ Զիմզի-

մովը վերջնականապես մերժում է Պեպոյին հարյուր
թումանը: Մի տեղ Պեպոյի ցանկությունը խնդրին էր,
կամ նույնիսկ պահանջելը, իսկ մյուսում՝ հայհոյելու-
անպատվելու լացարձակ ցանկությունն է: Փոխվեց
ցանկությունը, փոխվեց և խնդիրը, և՛ բեմական կտո-
րը:

ՅԵՆԹԱՏԵԿՍԸ

Այժմ անցնենք մի այլ, չափազանց կարևոր աշ-
խատանքի—յենթատեկստը վորոշելուն: Ի՞նչ է յենթա-
տեքստը և ի՞նչ փոխհարաբերություն ունի նա տեքս-
տի հետ: Ամբողջ խնդիրն այն է, վոր դերասանը բեմի
վրա արտասանելով այս կամ այն նախադասությունը,
յերբևք չի սահմանափակվում միայն այն մտքով, վո-
րը դրված է այդ տեքստի մեջ: Յեթե այդպես վարվեք
դերասանը, ապա նա դերասան չեք լինի, քանի վոր
նա վոչ մի բանով չի ավելացնում հեղինակի նյութը՝
նա չեք լինի իր դերի ստեղծագործողը: Հանդիսականի
համար այդ հետաքրքիր չեք լինի: Վորովհետև դերա-
սանի խոսքերի յետևը նա չեք տեսնի—միտքը, զգաց-
մունքը, իրական կյանքը, վորոնք թագնված են այդ
տեքստի մեջ:

Կարելի չէ հաստատ ասել (բացի մի քանի թույլ
պիեսներին), վոր համարյա բոլոր պիեսներում տեքս-
տը շատ քիչ է զուգադիպում յենթատեքստին: Այդպես
է կյանքում: Մարդը յերբ հուզված է լինում, ասում է
այն, ինչ չեք ուզում ասել: Պատճառը կամ նրա հուզ-
ված վիճակն է, կամ հարմար խոսքեր չգտնելը, կամ
իր մտքերի քողարկումն է, կամ ամաչելն է և այլն: Յեվ

մենք հասկանում ենք նրան լույ թե այն խոսքերից, Վոր նա արտասանում է, այլ այդ խոսքերի ինտոնացիայից և շարժումներից:

Ինտոնացիան և ժեստը—զրանք գերասանի գլխավոր միջոցներն են, Վորոնցով նա գործում է:

Ամեն մի Ֆրազ կարող է արտասանվել բազմաթիվ անգամ և ամեն անգամ ել կարող է ունենալ տարբեր իմաստ, նայած ինտոնացիաներին և ժեստերին: Յենթադրենք, Վոր մեկն ասում է «տաք է»: Յեթե ասողը սիրում է տաք յեղանակ, ապա նա կասի այնպես, Վոր «տաք է» խոսքը կհնչի Վորպես դուրեկան յերեվույթ «ի՛նչ լավ է, Վոր տաք է»: Կարող է պատահել և հակառակը՝ «տաք է» ասողը չի տանում շոգը, ապա «տաք է» խոսքը հնչում է Վորպես անդուրեկան յերեվույթ «ի՛նչ անտանելի շոգ է» և այլն:

Այն իմաստը, Վորը գերասանը դնում է Ֆրազի մեջ, մենք անվանում ենք յենթատեքստ:

Յենթադրենք, Վոր կինը խանդում է ամուսնուն: Յերկար հանգիմանությունից հետո կինը հարցնում է ամուսնուն՝ «սիրում ես ինձ, թե լույ»: Ամուսինը կնոջը հանգստացնելու համար սոսիպլած է լինում պատասխանել «այո, սիրում եմ»: «Այո, սիրում եմ» խոսքը ինքնին դրական է, ինքը խոսքն ասում է, Վոր սիրում է, սակայն այլ իմաստ է դնում գերասանը այդ Ֆրազըն ասելիս՝ «այո, սիրում եմ», միայն «ձեռք քաշիր ինձանից»: Կամ թե՛ «այո, սիրում եմ»—«ոխ, տանջեցիր ինձ» իմաստով և այլն:

Որինակ, «Պեսպո»-յում յերկրորդ գործողության մեջ Նփեմիան համբուրելով Զիմզիմովի գլուխն ասում է. «Մանուշակի հոտ է գալիս»: Դրական խոսք է: Սա

կայն նրա ներքին իմաստը գերասանուհին արտահայտում է այնպիսի ինտոնացիայով և ժեստերով, Վորից յերևում է, Վոր Զիմզիմովը զզվելի յե: Կամ թե՛ յերբ Զիմզիմովը հարցնում է Նփեմիային, թե «Ամա դուն ել դորթ խիստ իս սիրում ինձ, Փեփեք»: Նփեմիան այդ հարցին պատասխանում է «Զարթնի քիզ ձվ ունիմ աշխրջումը, իմ հոգին ու մարմինը դուն իս, իմ շունչն ու կենդանությունը դուն իս»: Այդ խոսքերի միտքն իրոք սիրահարված մարդու խոսքեր են, սակայն անպայմանորեն այլ իմաստ կտա գերասանուհին այդ խոսքերն ասելիս:

Յենթատեքստը գտնելու համար անհրաժեշտ է պատասխանել «ի՛նչ եմ յես ուզում ասել» հարցին:

Ուրեմն, բացի ինդիրը Վորոշելուց, այսինքն բացի «ի՛նչ եմ յես ուզում» և «ի՛նչ եմ յես անում» հարցից անհրաժեշտ է յենթատեքստը գտնել, այսինքն պատասխանել «ի՛նչ եմ յես ուզում ասել» հարցին:

Իհարկե, ամեն մի առանձին Ֆրազն ունի իր առանձին յենթատեքստը: Բայց ընդհանրապես պետք է ամբողջ բեմական կտորի յենթատեքստը գտնել:

Այդպիսով մենք կտեսնենք, Վոր ամեն մի Ֆրազն ևս իր հերթին, յե՛լնելով կտորի յենթատեքստից, կարտահայտի այն միտքը, Վոր դրված է յեղել ամբողջ կտորի յենթատեքստում:

ՓՈՐՁԵՐ ՍԵՂԱՆԻ ՇՈՒՐՁԸ

Փորձերը յերբեք չպետք է սկսել ուղղակի բեմի վրա: Բեմ անցնել կարելի յե միայն այն ժամանակ, յերբ արդեն մի շարք ինդիրներ պարզված են, յերբ

գերասանները սեղանի շուրջը համարյա խաղում են, մնում ե միայն նրանց դնել շարժման մեջ:

Սեղանի շուրջը կատարվում ե հետևյալ աշխատանքը: Յերը արդեն տեքստը բացահայտված ե, կտորները, խնդիրները և յենթատեքստը գտնված են, ապա սեփիսյորը գերասանների հետ աշխատում ե այն ուղղությամբ, վոր գերասանները տիրեն խնդիրներին և փոխհարաբերություն ստեղծեն իրար մեջ: Այդ աշխատանքն արտահայտվում ե նրանում, վոր գերասանները, սեղանի շուրջը նստած, սկսում են իրենց գերբը կարգալ վոչ այնպես, ինչպես գերերի առաջին ընթերցման ժամանակ, այլ դեպի խաղակիցը վերաբերմունք զգալով, խնդիրները կատարելով, տեքստը բացասանելով այնպես, ինչպես այդ թելադրում ե յենթատեքստը:

Սեղանի շուրջը յեղած աշխատանքը չպետք ե արագ կերպով վերջացնել: Անհրաժեշտ ե համառորեն և հետզհետե ձեռք բերել այն բնական ճշմարտությունը, վորը հատուկ ե ստեղծագործող արվեստագետին: Դերասանին անհրաժեշտ ե ժամանակ, վորպեսզի նա կարողանա գտնել և ապա ընտելանալ այն խնդիրներին, յենթատեքստին, վոր մշակվել ե մինչ այդ շրջանը: Այդ աշխատանքի մեջ, խնդիրների որդանական կատարումով, պետք ե գտնել իսկական, կենդանի շփում խաղակիցների միջև: Այդ իհարկե ձեռք ե բերվում յերկար աշխատանքի միջոցով և միանգամից չի կարելի գերասաններից այդ բոլորը պահանջել: Անժամանակ պահանջը ճիշտ չի լինի, ինչպես և ճիշտ չե գերասանից պահանջել հույզ խողար: Ավելի լավ ե մի կտորի վրա յերկար «նստել» ու պարապել, քան

թե մակերեսորեն ամբողջ պիեսն անցնել: Յեթե դերասանը չի կարողանում ավյալ կտորում ավելին դրսևվորել, ապա ավելին պահանջելու կարիք չկա, վորովհետև այդպիսի դեպքում նա կսկսի իրեն «հույ տալ» և արդյունքը կլինի այն, վոր նա կեղծիքի մեջ կընկնի: Այնինչ, մի կտորի սահմաններում, կատարելով համառ աշխատանք, նա հետզհետե կգտնի ճիշտ փոխհարաբերությունը, կզգա կենդանի կյանքը և առաջիկայում այդ կտորը բանալի կդառնա դերի մնացյալ մասերի համար:

Անհրաժեշտ ե լավ ըմբռնել վոր մարդկային ֆանտազիային նյութե ծառայում կյանքի իմացությունը, ճանաչողությունը: Վոչ մեկը չի կարող ավելին յերեակայել. քան այն, ինչ ամբողջությամբ կամ իր մասնիկներով գոյություն ունի սեղալ իրականության մեջ: Ստեղծագործողը պետք ե միշտ հարստացնի իր դիտողականության պաշարը: Յեթե արվեստագետը վատ ե իմանում այն իրականությունը, վորտեղ գործում ե իր հերոսը—ապա կատարելիք աշխատանքն ապարդյուն կդառնա: Թե սեփիսյորը և թե գերասանը պետք ե լավ իմանալ պատկերելիք իրականությունը, իսկ կյանքի այդ ճանաչողությունը նրա ստեղծագործական ֆանտազիային առաա նյութ կտա:

Յերը մինք ստում ենք, թե լավ ենք ճանաչում մարդուն, այդ նշանակում ե, վոր մենք գիտենք նրա հայացքները, ճաշակը, սովորությունները և այլն, թե ինչպես նա կվարվեր կյանքի մի շարք յերևույթների նկատմամբ:

Այդպիսի պարագայում, պարզ ե, վոր գերասանի կերտելիք կերպարը նրան նույնպես շատ մոտ ծանոթ

կլինի—կիմանա նրան այնպես, ինչպես ձենք գիտենք
կյանքում մեր շատ մոտ ծանոթներին: Ուրեմն, դերս
սանը իր Ֆանտազիայի միջոցով պիտի պատկերացնի,
թե ինչպես կվարվեր իր կերտած կերպարը այս կամ
այն յերևույթի նկատմամբ: Դերասանն իր յերևակա-
յությամբ պետք է իր կերպարին դնի կյանքի բոլոր
պայմաններում: Պատկերացնել պետք է նրան ամե-
նայն մանրամասնությամբ, վորովհետև «մանրուքներին»
միջոցով է, վոր կերպարը բազմակողմանի յի դառ-
նում:

Կերպարը ձեավորելու աշխատանքը չի սահմանա-
փակվում այն մի քանի ժամով, յերբ ուժիսյորը դե-
րասանների հետ խոսում է կերպարի մասին: Այդ խո-
սակցությունը միայն հիմք պետք է ծառայի ապագա
աշխատանքի համար: Դերասանը կերպար ստեղծելու
աշխատանքը կատարում է ինքնուրույն կերպով, փոր-
ձերի հետ զուգընթաց: Այդ աշխատանքի արդյունքը
միշտ էլ զգացվում է փորձերի ժամանակ: Ռեժիսյորը
պետք է նկատի այն, ինչ դերասանի մեջ դուռն սաղ-
մային վիճակումն է: Ռեժիսյորը պետք է «ուղեկցողի»
դերում լինի: Յեթև ուժիսյորը նկատում է, վոր դերա-
սանը ճիշտ է ուրվագծում կերպարը, ապա նա պար-
տավոր է ոգնել նրան դերը դարգացնելու ուղղությամբ:
Կարող է պատահել, վոր ինչ—ինչ պատճառներ խան-
գարեն դերասանին ճիշտ կերպով զգալու կերպարը,
այդ պարագայում ուժիսյորի պարտականությունն է
պարզել ու վերացնել խոչընդոտները:

Այդպիսով, կերպարի շուրջը յեղած աշխատանքը
կանգ չի առնում մինչև առաջին ներկայացումը և
նույնիսկ շարունակվում է խաղալու ընթացքում, վո-

րովհետև խաղի ընթացքում կերպարի նորանոր կող-
մերն են յերևան գալիս: Ռեժիսյորը միշտ պետք է
հետևի և ուղղությունն տա դերասանին: Դերասանը
պետք է իր կերպարի հետ «ապրի», «գործի», «զրու-
նի» և այլն և այլն:

ՓՈՐՉԸ ԲԵՄԻ ՎՐԱ

Յերբ արդեն ուժիսյորը և դերասաններն զգում
են, վոր մի վորևե մասը կամ գործողությունն արդեն
այնքան է մշակված սեղանի շուրջը, վոր անհրաժեշ-
տություն է դառնում նույն փորձերը կատարել շարժ-
ման մեջ դնելով—կարելի յե անցնել բեմ: Մինչ բեմի
վրա փորձերին անցնելը, անհրաժեշտ է, վոր դերակա-
տարների մեջ ստեղծված լինեն՝ ճիշտ և կենդանի վե-
րաբերմունք, փոխհարաբերություն, խնդիրների որդա-
նական յուրացում: Կրկնում ենք, բեմ պետք է անցնել
այն ժամանակ, յերբ արդեն ցանկություն է առաջ
գալիս սեղանի շուրջը յեղած գործողություններին ա-
վելացնել ժեստեր, անցումներ և այլն:

Մ Ի Զ Ա Ն Ս Ց Ե Ն

Բեմական տարածության վրա Ֆիզուրների այն
դասավորումը, վորը նպատակ ունի գործող անձանց
անընդհատ վորոշ հարաբերության մեջ դնել, ինչպես
իրար մեջ, այնպես էլ շրջապատող իրերի հանդեպ—
կոչվում է միզանսցեն: Բեմի վրա դերասանը կերպարը
կոնկրետացնելու համար ոգտագործում է իր տրամա-
դրության տակ յեղած բոլոր արտահայտչական միջոց-
ները:

Այդպիսի արտահայտչական միջոցները թվին և պատկանում խոսքը (ինտոնացիան), շարժումը (թեստ) և միմիկան (դիմախաղը):

Իրանք կոչվում են արտահայտչական միջոցներ պարզ այն պատճառով, վորովհետև այդ արտաքին միջոցներով և արտահայտվում ներքինը: Ձե՞ վոր այդ արտահայտչական միջոցներով և, վոր հանդիսականն ընդունում և դերասանի խաղը:

Դերասանն արտահայտիչ պետք է լինի այն ժամանակ, յերբ նա լսում և խաղակցին (պարտնյորին) և ընդհանրապես այն ժամանակամիջոցում, յերբ նա գտնվում և բեմի վրա:

Կսելով իր խաղակցին, դերասանը կարտահայտի այն տպավորությունը, ինչ թողնում է նրա վրա խաղակցի խոսքերը:

Յերբ մենք խոսում ենք միզանսցենի մասին, ապա մեզ գլխավորապես հետաքրքրում է շարժումը: Ի՞նչ բնդհանուր բան կա դերասանի շարժման և միզանսցենի միջև: Յերբ դերասանն այս կամ այն շարժումն և անում, մենք ասում ենք, վոր նա իր դերքը (պողան), մարմնի արտաքին դրությունը փոխեց:

Բեմում դերասանի դերքը պետք է արտահայտի կերպարի ներքին դրությունը, նրա վերաբերմունքը խաղակիցների և իրերի հանդեպ:

Դերասանի դերքը — այդ բեմական տարածության վրա նրա յեղած գրությունն է, յերբ շրջապատող ընկերների և իրերի հանդեպ վորոշ հարաբերություն է ստեղծվել:

Յեթև դերասանը բեմի վրա գտնվում է միայնակ, ապա նրա դերքը կլինի և ավյալ կտորի միզանսցենը: Իսկ յեթև բեմի վրա գտնվում են յերկու կամ ավելի գործող անձեր, ապա միզանսցեն մենք կանվանենք

նրանց ներքին փոխհարաբերությունն արտահայտող արտաքին դասավորումը:

Այսպես ուրեմն, Ֆիզուրների արտաքին (Ֆիզիկական) վերաբերմունքով պետք է արտահայտվեն նրանց ներքին փոխհարաբերությունները:

Ի՞նչ ձևով ուրեմն ուժիսյորը պետք է կառուցի միզանսցենը: Մենք պիտք բաժանեցինք մասերի և մասերը կտորների: Մենք ամեն մի կտորի համար անուն գտանք, վորը պետք է արտահայտեր այն հիմնական իմաստը, վորով վարակված պետք է լինեն կտորի բոլոր գործող անձինք:

Այժմ մենք ամեն մի կտորի համար պետք է կառուցենք այնպիսի միզանսցեն, վորը արտահայտի տըվյալ կտորի հիմնական միտքը:

Այդպիսի միզանսցենը կոչվում է հիմնական միզանսցեն:

Միզանսցենը պետք է կառուցվի դերասանին հարմար, հանդիսականին հասկանալի:

Ամեն մի միզանսցեն, վորը կառուցված է ուժիսյորի կողմից և ապա կատարած դերակատարների կողմից, պետք է բավարարի մի շարք գեղարվեստական պահանջներին: Միզանսցենի գեղարվեստական վորակը կախված է նրա արտահայտիչ և բնական լինելուց:

Բնական լինելու հանգամանքը պահանջում է, վոր միզանսցենը «գլխին զու տվածի» տպավորություն չթողնի: Մարդկանց դասավորումը բեմի վրա պետք է լինի այնպես բնական ու պարզ, ինչպես այդ լինում է կյանքում: Իհարկե, պիտի նկատի ունենալ մի շարք բեմական պայմանականություններ՝ կոմպոզիցիա և այլն...

Ճիշտ կառուցված միզանսցենը բղխում է գործու-

դուժյունից. ուստի, այն դերակատարը, վորը ճիշտ ե կատարում ինդիբը, միզանացենը չի կարող նրան անհարմար թվալ:

Սակայն ուժիսյորը յերբեք դերասանից չպետք ե կուրորեն պահանջի, վոր նա բնմի վրա ճշտությամբ դրանորի սկզբնական շրջանում կառուցված միզանացենը: Սկզբնական միզանացենը պետք ե յեղակետ լինի: Աշխատանքի ժամանակ, յերբ ուժիսյորը գործ ե ունենում կենդանի մարդկանց հետ, կարող ե շատ ավելի հետաքրքիր միզանացեններ կառուցել: Շատ հաճախ դերասանը կարող ե հուշել այնպիսի մի հետաքրքիր միզանացեն, վոր ուժիսյորը յերբեք ել չէր. մտածել դրա մասին: Ռեժիսյորը չպետք ե արհամարհի դերասանների յիտողությունները, այլ ընդհակառակը, կարևոր առաջարկը պիտի ընդունի, յեթե այդ գործին ոգուտ կրերի:

ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Դերասանի հետ աշխատելիս, ուժիսյորը միշտ պիտի հրահրի դերասանի ստեղծագործական ֆանտազիան, վորպեսզի ստեղծագործական դրություն ստեղծի:

Ի՞նչ ե ստեղծագործական դրությունը:

Ստեղծագործական դրություն մենք համարում ենք այն դրությունը, յերբ դերասանը կարողանում ե ազատ ե ճիշտ վերաբերմունք ցույց տալ դեպի այն ամենը, ինչ կատարվում ե բնմի վրա, չնայելով նրան, վոր բնմում ստեղծվող դրությունները պայմանական են: Բոլորի հանդեպ դերասանն այնպես պիտի վարվի, վոր կարծեք, թե այդ յերևույթներն իրական են,

կյանքում են տեղի ունենում: «Պեպո» պիեսի մեջ Շուշան, Պեպո, թե Կակուլի խաղացողները շատ լավ գիտեն, թե վորտեղ պիտի Գիքոն ասի, թե բարաթը գլուխվել ե, սակայն բոլոր գործող անձինք պետք ե այդ լուրն ընդունեն, վորպես մի ուրախալի ե անսպասելի յերևույթ: Այլապես՝ դերասանի խաղի մեջ վոչ մի ճշմարտություն չի լինի. այն տպավորությունը կթողնի, վոր դերասանը միայն ձևացնում ե՝ թե ուրախացել ե:

Դերասանական ներքին տեխնիկայի վարպետության գլխավոր ինդիբն այն ե, վոր կարողանա սովորել իր մեջ ստեղծագործական դրություն առաջ բերել: Սակայն չի կարելի դերասանից պահանջել, վոր նա ինքնուրույն կերպով հասնի այդ դրությանը: Անհրաժեշտ ե ուժիսյորի ոգնությունը:

Թե սեղանի շուրջը կատարվող աշխատանքի ժամանակ, թե բնմի վրա աշխատելիս, ուժիսյորը ստիպված ե լինում դերասանին բազմապիսի դիտողություններ անել: Դերասանին այդ դիտողությունները պետք ե անել այնպես, վոր նա վոչ միայն ըմբռնի, այլև զգա ուժիսյորի ցանկացածը:

Ռեժիսյորական դիտողությունները կարող են լինել կամ բացատրական ձևով կամ ցույց տալով:

Ռեժիսյորի դիտողության գլխավոր ձևը պետք ե համարել բացատրականը: Կարող ե պատահել, վոր սկզբից ուժիսյորը դերասանից իր ուղածը չստանա: Այդ դեպքում նա պետք ե համբերատար լինի: Ուշադիր ե բարյացակամ վերաբերմունքը մեծ արդյունք կտա ուժիսյորին: Դա յերկար ճանապարհ ե, սակայն ավելի անվտանգ ե, քան «ցույց տալու» ձևը: «Ցույց

տալու» ձեռք, չնայած ավելի հեշտացնում է աշխատանքը, բայց ունի իր վտանգավոր կողմերը, ինչպես որինակ՝ ընդորինակումը և այլն...

«Յույց տալու» ձևի կիրառման դեպքում լավ կլինի, յեթե սեփխյորը ջույց տա ընդհանուր դրությունը, այլ վոչ թե կերպարի մասնավոր դրությունը: Իրա համար լավ կլինի, յեթե «ցույց տալու» դեպքում սեփխյորն ոգտվի իմպրովիզացիոն նյութից, այլ վոչ թե տվյալ կերպարի տեքստից:

«Յույց տալու» դեպքում (վորը, ի դեպ քիչ պետք է դիմել) սեփխյորը վոչ թե մինչև վերջը պիտի խաղա մի տեսարան, այլ միայն մի փոքր կտոր կատարի և այն ել ակնարկի ձևով, վորպեսզի դերասանի վորոնումները ճիշտ ուղու վրա դրվեն:

Իերասանը, զգալով ճիշտ ուղղությունը, ինքը կկարողանա զարգացնել այն, ինչ սեփխյորը ցույց էր տվել միայն ակնարկի ձևով:

Ստեղծագործական դրությունից կտրվելու ինչպիսի պատճառներ կարող են լինել:

Իերասանին խանգարող առաջին պատճառն այն է լինում, յերբ բեմի վրա նրա ուշադրությունը կենտրոնացած չէ: Յուրաքանչյուր վայրկյանում դերասանի ուշադրությունը պետք է զբաղված լինի բեմով: Իերասանը բեմի վրա պիտի ամեն ինչ տեսնի և ամեն ինչ լսի և իհարկե, ամենից առաջ խաղակցին: Շատ շատերը ձևացնում են, թե լսում և տեսնում են: Անհրաժեշտ է իրոք տեսնել և լսել խաղակցին: Միայն այդ դեպքում նա կարող է ճիշտ վարվեցողություն ունենալ բեմում կատարվող յերևույթների հանդեպ, ստեղծելով ճիշտ փոխհարաբերություն:

Յերկրորդ խանգարիչ պատճառը՝ յերբ դերասանի միանունը լարված են լինում: Իերասանի միանունը բեմում պիտի լինեն վոչ լարված և վոչ ել թուլացած: Միանունը պետք է լինեն ազատ: Այդ նշանակում է, վոր ամեն մի բեմական դրության և շարժման համար պիտի ծախսել այնքան միանունքային հնարգիտ, ինչքան տվյալ դրության համար պահանջվում է: Վոչ ավելի և վոչ ել պակաս:

Իուր շատ հաճախ անփորձ դերասանների մեջ կարող էր նկատել, թե ինչպես նրանք ամբողջովին լարված գոգոտում են, կարծես ուղում են ժողովրդին վախեցնել: Իսկ միանունների ավելորդ լարումն է, վորը մեծ չափով խանգարում է ազատ ստեղծագործությանը:

Յերրորդ խանգարիչ պատճառը, յերբ դերասանը չի կարողանում իր վարքը բեմի վրա արդարացնել: Ամեն մի գործողություն, շարժում, խաղակցի հետ ունեցած վերաբերմունքը պիտի արդարացված լինի:

Չորրորդը՝ այն է, յերբ լրիվ չափով պարզ չեն վերաբերմունքը: Յեթե պարզ չեն վերաբերմունքը, բնականաբար դերասանը չի կարող ճիշտ կերպով կատարել իր առաջ դրած խնդիրը:

Հինգերորդ՝ յերբ դերասանը կամենում է հույզ խաղալ:

Իերասանի մարմինը միշտ պետք է պատրաստ լինի ամեն մի բարդ խնդիր կատարելու համար:

Նա պետք է կարողանա ուղած ժամանակ իրեն կտրի իր առօրյայից և դնի բոլորովին այլ պայմաններում: Այսինքն՝ նա պետք է դանդի ստեղծագործական վիճակում:

Շատ հաճախ յերիտասարդ ուսուցիչները, իրենց անփորձութեան հետևանքով, սիրում են «քշել» պիեսը, այսինքն՝ պիեսը փորձել սկզբից մինչև վերջ: Դա արվում է, ըստ յերևույթին, նրա համար, վորպեսզի պիեսից ընդհանուր տպավորութիւն ստանան: Պետք է նախազգուշացնել, վոր յերբեք չի կարելի ժամանակից շուտ «քշել» պիեսը: Անհրաժեշտ է նախ բոլոր կտորները՝ իր խնդիրներով, վերաբերմունքով և յենթատեքստերով մի քանի անգամ փորձել և հասցնել իսկական դերասանական կատարման, գեղարվեստական ճշմարտութիւն գտնելու աշխատանքին, ապա նոր միայն «քշել» պիեսը սկզբից մինչև վերջ: Այդպիսի աշխատանքից հետո միտք ունի սկզբից «քշել» միայն մի գործողութիւն, հետո մնացյալները և, ի վերջո, սկզբից մինչև վերջ: Ահա այդ ժամանակ միայն ուսուցիչը կարող կլինի լախորեն դիտել, թե իր և թե դերասանների թերի կողմերը և ուղղել այն: Այդպիսի փորձի ժամանակ դերասանը և ուսուցիչը գործնականում կարող են զգալ թե պիեսի և թե դերի գործողութիւն զարգացման գիծը (այսինքն պիեսի և կերպարի միջանցիկ գործողութիւնը):

Ան ավարտական փորձերին (վորտեղ զեռ ներմուծված չեն մի շարք նոր տարրեր, այն է՝ զգեստը, պարիկը, գրիմը, դեկորը և այլն) հաջորդում են մաքուր ավարտական փորձերը, վորտեղ վերոհիշյալ բոլոր նոր տարրերը խոշոր դեր են կատարում:

Շատ հաճախ պատահում է, վոր առաջին մաքուր ավարտական փորձերը գնում են անհամեմատ թույլ:

քան վոր ավարտական փորձերը: Դրանից յերբեք չպետք է հուսահատվել, վորովհետև դերասանի խաղին ավելանում են այնքան նոր տարրեր (պարիկ, զգեստ, դեկոր և այլն), վոր դերասանը չի կարողանում առաջին պահին լրիվ չափով նրանց հարմարվել, ընտելանալ: Անհրաժեշտ է, վոր ուսուցիչը գոյութիւն ունենա հենց փորձերի սկզբին, վորպեսզի դերասանը կարողանա սկզբից իսկ նրանց ընտելանալ: Մաքուր ավարտական փորձերը սովորաբար արվում են 2—4, մինչև վոր զալիս է գլխավոր ավարտական փորձը, ինչպես սովորաբար «գեներալի» փորձ են անվանում:

Գլխավոր ավարտական փորձը — դա արդեն ներկայացում է, վորտեղ թե ուսուցիչը և թե դերասանը իրենց ստուգման են յենթարկում: Լավ կլինի, վոր գլխավոր ավարտական փորձին ներկա լինեն շատ սահմանափակ թվով (մինչև 10—15 հոգի) հանդիսական:

Բոլոր ավարտական և գլխավոր ավարտական փորձերին ուսուցիչը պետք է գրի առնի իր դիտողութիւնները և այդ դիտողութիւնների շուրջը ստեղծագործող կողմերի հետ զրույցներ ունենա:

Վերջապես զալիս է առաջին ներկայացումը (պրեմիերան):

Առաջին ներկայացումը — անսպասելի հուզում առաջացնող ներկայացումն է, վորովհետև դերասանն առաջին անգամ հանդիպում է հանդիսականին: Սովորաբար այդ ներկայացման մասնակցողները բարձր տրամադրութեան մեջ են լինում: Սակայն դերասանը չպետք է այդ որը դիտի, իբրև իր ստեղծագործութեան վերջին որը: Դա ճիշտ չէ:

Այն, ինչ մշակվել և կուտակվել է փորձերի ժա-

մանակ, ներկայացումները պահին է, վոր հետզհետե
իրենց վերջնական ձևավորումն են գտնում: Առաջին
ներկայացումների ժամանակ է, վոր դերը սկսում է
«մեծանալ» — հասունանալ: Այստեղ մեծ դեր է խաղում
հանդիսականը — նրա ուսուցիչն է: Դա կոչվում է «դերի
ստուգումը հանդիսականի առաջ»:

Կարելի չէ համարձակորեն ասել, վոր բանիսիդձ
վերաբերմունքի դեպքում, 5—6 ներկայացումից հետո
բեմադրությունը, զրական իմաստով, անճանաչելի չէ
դառնում:

Սակայն խաղալու շրջանում կան մի քանի վտանգ-
ներ, վորոնց մեջ, ցավոք սրտի, շատ շատերն են ըն-
կնում:

Վերն է այդ վտանգներից վատագույնը.

Այն, յերբ դերասանն ուզում է «զուր գալ» հան-
դիսականին: Շատ հաճախ դերասանը ցանկանում է
հանդիսականից ստանալ ավելի ուսուցիչ, սկսում է ժո-
ղովրդին ծիծաղեցնել: Իհարկէ, դա ինքնախաբեու-
թյուն է, ծիծաղը ուսուցիչի միակ ձևը չէ: Ծիծաղեց-
նել աջատեղ, վորտեղ ծիծաղեցնել պետք չէ, այդ նշա-
նակում է դիտակցորեն ներկայացմանը վնաս հասցնել:
Ամենասարսափելին այն է, յերբ դերասանը մտահոգված
է «զուր գալու» խնդրով: Նա դադարում է ապրել
բեմի վրա, նա կորցնում է կատարման զեղարվեստա-
կան ճշմարտությունը, նա դուրս է գալիս ուշադրու-
թյան շրջանակից և կորցնում է վերաբերմունքը դեպ-
քերի ու գործող անձանց նկատմամբ:

Այսպիսով, մենք նշեցինք այն ուղիները, վորոն-
ցով պետք է ընթանա պիեսի պատրաստումը թատրոնի
ներսում: Այս աշխատությունը յես պատրաստել եմ իմ

ուսուցիչներին՝ Մրակվայի Վախտանգովի անվան թատ-
րոնի ժողովրդական արտիստ Ռուբեն Նիկոլայեվիչ
Սիմոնովի, արվեստի վաստակավոր գործիչ՝ Բորիս Յեվ-
զենեվիչ Ջախավայի և վաստակավոր արտիստ՝ Յոսիֆ
Մատվեյեվիչ Ռապապորտի մեղ հետ ունեցած զրույց-
ների հիման վրա:

Մեր ժամանակներում թատրոնը դարձել է խոշոր
կուլտուրական գործոն, նրա դերը ժողովրդի հոգեբա-
նությունը և հույզերը կազմակերպելու գործում հսկա-
յական է:

Սակայն յերբեք հնարավոր չէ մեր թատերական
արվեստի պրակտիկան դնել բարձր աստիճանի վրա,
յիթե մենք զինված չենք տեսական մտքով:

Մեզ համար կենսական է դառնում մեր թատրոն-
ների ստեղծագործական աշխատանքների վերակառուց-
ման խնդիրը, նրանց ավելի մեծ թափ հաղորդելու հա-
մար: Դրա համար ամենից առաջ մենք պետք է զին-
ված լինենք տեսությամբ: Լինինիզմը մեզ սովորեց-
նում է, վոր «առանց հեղափոխական թեորիայի չի
կարող հեղափոխական շարժում լինել»:

Ուրեմն, յիթե մենք չունենանք մեր աշխատանքի
թեորիան, չլիմանանք ի՞նչ ենք մատուցում և ինչպե՞ս
ենք մատուցում մեր ժողովրդին, ապա մեր բնագավա-
ռի արտադրանքը — ներկայացումը կլինի արատավոր.
նա յերբեք չի կարողանա մարտական գեներ դառնալ
մեր կյանքի վերակառուցման աջափսի մի բարդ բնա-
գավառում, ինչպիսիս է — մարդկանց հոգեբանությունն
ու եմոցիոնալ աշխարհը:



В А В И К В А Р Т А Н Я Н

Заслуженный деятель искусств Армянской ССР

БЕСЕДА О СЦЕНИЧЕСКОМ ИСКУССТВЕ

Краткое пособие для молодых режиссеров и актеров.

ՀՀ Ազգային գրադարան



NL0301421

